ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Զ Ե Կ ՈՒ Յ Ց

# «ՀՀ-ՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2025-2028ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ» 2025Թ.

*Զեկույցը պատրաստվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից*

Երևան 2026

## Բովանդակություն

**Ներածություն** .....3

**Մեթոդաբանություն**.....5

ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարության և միջոցառումների ծրագրի շրջանակում կատարված աշխատանքներ .....6

Գերակայություն 1.....6

Գերակայություն 2.....18

Գերակայություն 3.....22

Գերակայություն 4.....38

Գերակայություն 5.....45

Գերակայություն 6.....60

Ամփոփում.....68

## Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում գենդերային հավասարության քաղաքականությունը, ունենալով իր ուրույն տեղը ՀՀ կառավարության ձևավորած օրակարգային հարցերի շարքում, ուղղված է նպաստելու հասարակական, քաղաքական, տնտեսական և հանրային կյանքի բոլոր ոլորտներում հավասար հնարավորությունների և իրավունքների երաշխավորման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը:

ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 23-ի 482-Լ որոշմամբ հաստատվել է «ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025–2028 թվականների ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը» (այսուհետ՝ Ռազմավարություն). փաստաթուղթը սահմանում է երկրում գենդերային քաղաքականության իրականացման վեց գերակայություններ.

**Գերակայություն 1.** Կառավարման բոլոր ոլորտներում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային խտրականության հաղթահարում. կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար ու լիարժեք մասնակցության հնարավորությունների ապահովում և ընդլայնում,

**Գերակայություն 2.** Սոցիալ-տնտեսական բնագավառում՝ աշխատաշուկայում, տնտեսության տարբեր ճյուղերում, աշխատանքային գործունեության մեջ գենդերազգայուն մոտեցումների խրախուսում, աշխատուժի գենդերային խզվածքի նվազեցում և աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների բարելավում,

**Գերակայություն 3.** Կրթության և գիտության ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցության խթանում, հավասար հնարավորությունների ընդլայնում,

**Գերակայություն 4.** Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովում,

**Գերակայություն 5.** Գենդերային բռնության և խտրականության կանխարգելում ու հաղթահարում, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանություն և աջակցություն,

**Գերակայություն 6.** Կլիմայի փոփոխության նկատմամբ գենդերազգայուն և գենդեր-արձագանքող մոտեցումների ձևավորում,

ներառական սկզբունքների ապահովում և իրազեկվածության բարձրացում:

Վերոնշյալ գերակայությունների իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության ամրապնդմանը՝ ստեղծելով ապահով, ներառական և հավասար պայմաններ անհատի ներուժի բացահայտման և մարդկային կապիտալի զարգացման համար:

Սույն Զեկույցը ներկայացնում է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028թթ. ռազմավարության և միջոցառումների ծրագրի շրջանակում 2025 թվականին կատարված աշխատանքների ամփոփ նկարագիրը՝ նպատակ ունենալով գնահատել գենդերային քաղաքականության արդյունավետությունը և Ռազմավարությունից բխող միջոցառումների կատարման ընթացքը:

## Մեթոդաբանություն

Սույն Զեկույցը մշակվել է ներառելով բացառապես ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025–2028 թվականների ռազմավարության այն միջոցառումները, որոնք նախատեսված են եղել 2025 թվականի համար, այս թվում են նաև շարունակական միջոցառումները, որոնց կատարման ժամկետները ներառում են 2025 թվականը:

Տվյալների հավաքագրումը իրականացվել է Ռազմավարության միջոցառումների կատարման համար պատասխանատու պետական մարմիններից: Զեկույցում ներկայացված են նաև միջազգային և տեղական գործընկերների հետ համագործակցությամբ իրականացված աշխատանքները:

Զեկույցի մշակման համար հիմք են հանդիսացել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից համակարգված և իրավասու մարմինների կողմից ներկայացված պաշտոնական տվյալները և հաշվետվությունները, ինչն ապահովում է տվյալների ինստիտուցիոնալ հավաստիությունն ու համադրելիությունը:

Զեկույցը մշակվել է որակական, քանակական և վերլուծական մեթոդների համադրմամբ: Միջոցառումների կատարման վերաբերյալ ներկայացված տեղեկությունները վերլուծվել են՝ ըստ ակնկալվող արդյունքի և նախատեսված արդյունքային ցուցանիշների: Յուրաքանչյուր միջոցառման կատարման վերաբերյալ ներկայացվել են առաջարկներ 2026 թվականի համար:

Զեկույցի շրջանակում դիտարկվել են 2025 թվականին նախատեսված բոլոր միջոցառումները՝ հիմք ընդունելով դրանց համապատասխանելիությունը Ռազմավարության գերակայություններով սահմանված նպատակներին:

Սույն փաստաթղթում ներկայացված աշխատանքները դիտարկվել են երկու համատեքստում՝

- կատարված աշխատանքներ և գործողություններ, որոնք ուղղակիորեն բխում են Ռազմավարության միջոցառումների ծրագրից,

- կատարված աշխատանքներ և գործողություններ, որոնք նպաստում են Ռազմավարությամբ սահմանված նպատակների իրականացմանը:

## ՀՀ-ՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2025-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

### ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1. Կառավարման բոլոր ոլորտներում և որոշումների ընդունման մակարդակում գենդերային խտրականության հաղթահարում. կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի կատարելագործում, կանանց և տղամարդկանց հավասար ու լիարժեք մասնակցության հնարավորությունների ապահովում և ընդլայնում

Գերկայության 1-ի շրջանակում իրականացված բոլոր աշխատանքները ուղղված են պետական քաղաքականության և կառավարման բոլոր ոլորտներում գենդերային հավասարության հասնելուն, մասնավորապես՝ մասնակցային, ներառական և հասանելի քաղաքական դաշտ ապահովելուն, որտեղ կանայք և տղամարդիկ, այդ թվում՝ տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչները, կարող են ակտիվորեն և լիարժեք մասնակցել և հավասարապես նշանակալից ազդեցություն ունենալ կառավարման մակարդակում և որոշումների կայացման գործընթացների վրա:

2025 թվականին նախատեսված բոլոր **7** միջոցառումները ներառում են 2025-2028թթ. ժամանակաշրջանը՝ ենթադրելով կատարման պարբերական բնույթ:

**2025 թվականի համար նախատեսված միջոցառումներն են՝**

- ✓ «Հիմք ընդունելով մարզային գենդերային խնդիրները՝ մարզպետներին և Երևանի քաղաքապետին կից գենդերային հարցերով հանձնաժողովների տարեկան պլանների կազմում և նիստերի կանոնավոր և շարունակական գործունեության անցկացում»,

- ✓ «Ռազմավարական փաստաթղթերում գենդերային ազդեցության գնահատման (մեյնսթրմինգի) մեթոդաբանության մշակում և ներդնում»,

- ✓ «Հանրային ծառայողների համար գենդերային հավասարության և գենդերազգայնության վերաբերյալ վերապատրաստումների մոդուլի մշակում և ներդնում»,

- ✓ «Հանրային ծառայողների համար գենդերային հավասարության, գենդերազգայնության և կանանց իրավունքների վերաբերյալ

համակարգված ուսուցման կազմակերպում՝ կանոնավորված, պարտադիր և շարունակական վերապատրաստման դասընթացների միջոցով»,

- ✓ «Լրատվամիջոցների հետ համագործակցությամբ հանրային իրազեկվածության բարձրացում՝ քաղաքական և հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց (այդ թվում՝ խոցելի խմբերի) լիարժեք և ներառական մասնակցության կարևորության վերաբերյալ»

- ✓ «Կնոջ դերն ու նշանակությունը բարձրացնելու նպատակով մեդիա հարթակներում Հայաստանի Հանրապետության կայացման գործում մասնագիտական զգալի ներդրում ունեցած կանանց լուսաբանում և ներկայացում»,

- ✓ «Քաղաքացիական ծառայողների համար ընդհանրական կոմպետենցիաների մշակում և ներդնում՝ մասնավորապես ընդգծելով և ներառելով գենդերազգայուն և ներառական բաղադրիչը»:

**Գերակայություն 1.3 «Հիմք ընդունելով մարզային գենդերային խնդիրները՝ մարզպետներին և Երևանի քաղաքապետին կից գենդերային հարցերով հանձնաժողովների տարեկան պլանների կազմում և նիստերի կանոնավոր և շարունակական գործունեության անցկացում»**

Միջոցառման կատարման հիմնական պատասխանատուն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է մարզպետների աշխատակազմերի և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ:

Կանանց մասնակցությունը տեղական ինքնակառավարման գործընթացում տեսանելիորեն բարելավել է իր ցուցանիշները, հատկապես՝ ՀՀ ընտրական օրենսգրքի բարեփոխումներից հետո: Ներկայումս քաղաքական ուժերի ներկայացրած համամասնական ընտրակարգով ընտրությունների ցուցակներում ամեն երրորդ թեկնածուն պետք է լինի այլ սեռի ներկայացուցիչ: Այսպիսով՝ կանանց ներգրավվածությունը ապահովվում է **30%** քվոտայով: Օրենսդրական բարեփոխումների արդյունքում ներկայումս տեղական ինքնակառավարման մարմիններում տոկոսային հարաբերակցությամբ համայնքների ղեկավարների շրջանում կանայք **5.6%** ներկայացվածություն ունեն, իսկ ավագանու անդամների շրջանում՝ շուրջ **30%**:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «Համայնքի ղեկավարի տեղակալները» վերտառությամբ հոդվածում (հոդված 63) ամրագրվել է դրույթ, որով համայնքի ղեկավարն ունի մեկ առաջին տեղակալ, որը ավագանու անդամ է, համայնքի ղեկավարը կարող է ունենալ ևս երկու տեղակալ՝ հնարավորության դեպքում՝ **հակառակ սեռերի ներկայացվածությամբ**:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) և Նորվեգիայի Թագավորության Արտաքին գործերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվող «Դիմակայունություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում 2024 թվականին նախաձեռնվել և իրականացվել է ՀՀ բոլոր համայնքների (բացառությամբ Երևանի) ավագանիների համար **«Մասնակցային և ներառական դասընթացները համայնքի զարգացման համատեքստում»** երկօրյա դասընթացը:

Նախքան ծրագրի մեկնարկը, դասընթացներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակվել են մոդուլներ, որոնք կրում են ուսուցողական բնույթ և զետեղվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հեռավար ուսուցման կառավարման համակարգում՝ դասընթացների շարունակական արդյունավետության պահպանման նպատակով: Ուսուցողական նյութերի հիմնական շեշտադրումը դրվել է **լավ կառավարման 12 սկզբունքների**, մասնակցային մեխանիզմների և համայնքի ավագանուն օրենքով վերապահված լիազորությունների վրա՝ նպատակ ունենալով ընդլայնել վերջիններիս իրազեկվածության շրջանակը, ներկայացնել ավագանու լիազորությունների շրջանակից բխող որոշումների կայացման կապը, ինչը կզարգացնի ավագանիների կարողությունները և ակտիվ ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում:

ՀՀ տարբեր մարզերից ներկայացված տվյալների և 2025 թվականի ընթացքում աշխատանքային քննարկումների և հանդիպումների ամփոփ արդյունքները վկայում են մարզային մակարդակում միջոցառման կատարման բարձր արդյունավետության և տեսանելի արդյունքային ցուցանիշների մասին.

- ✓ **ՀՀ Արագածոտնի մարզ.** Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովի 2025 թվականի տարեկան պլանը հաստատված է: Իրականացվել է հանձնաժողովի 4 նիստ, որից 3-ը արտագնա՝ խոշորացված համայնքներում,

- ✓ **ՀՀ Արարատի մարզ.** Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովի 2025 թվականի տարեկան պլանը հաստատված է և կատարված են նախատեսված բոլոր միջոցառումները, ապահովել է նիստերի շարունակական անկացումը,

- ✓ **ՀՀ Գեղարքունիքի մարզ.** մարզպետի որոշմամբ Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովը ձևավորված է,

- ✓ **ՀՀ Լոռու մարզ.** մարզպետի որոշմամբ մարզպետին կից Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովը ձևավորված է, 2025 թվականի ընթացքում կայացել է հանձնաժողովի մեկ նիստ, որի ընթացքում քննարկվել են մարզում առկա գենդերային խնդիրներն ու իրականացվող տարբեր ծրագրերին առնչվող հարցերը,

- ✓ **ՀՀ Կոտայքի մարզ.** 2025 թվականի ընթացքում Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողով չի ձևավորվել, այնուամենայնիվ մարզպետի աշխատակազմը հայտել է պատրաստակամություն օրենսդրական կարգավորումների առկայության դեպքում ապահովել անհրաժեշտ աշխատանքների իրականացումը,

- ✓ **ՀՀ Շիրակի մարզ.** Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովը ձևավորված է, հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովը անցկացրել է մեկ նիստ, որի ընթացքում քննարկվել է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը և մշակվել է հանձնաժողովի 2026 թվականի գործունեության պլանը,

- ✓ **ՀՀ Սյունիքի մարզ.** Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովը ձևավորված է, հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է հանձնաժողովի 2 նիստ, նիստերի ընթացքում քննարկվել են ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028թթ. ռազմավարությունը, պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման (ըստ սեռի հաշվառում) և ուսուցման համակարգ վերադարձման ուղղությամբ կատարվող աշխատանքները և Սյունիքի մարզում ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրական պատկերը, բռնության ենթարկված կանանց աջակցման ուղղությամբ կատարվող

աշխատանքները,

- ✓ **ՀՀ Վայոց ձորի մարզ.** Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովը ձևավորված է, հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է հանձնաժողովի 2 նիստ, որի ընթացքում քննարկվել են 2025 թվականին կատարված աշխատանքները և 2026 թվականին նախատեսվող միջոցառումները,

- ✓ **ՀՀ Տավուշի մարզ.** Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովը ձևավորված է, հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովն անցկացրել է երկու նիստ,

- ✓ **ՀՀ Արմավիրի մարզ.** Գենդերային հարցերով զբաղվող մշտական մարզային հանձնաժողովը ձևավորված է, հաշվետու ժամանակաշրջանում հանձնաժողովը հրավիրել է 1 նիստ:

**Ամփոփում.** միջոցառումը կատարված է մասամբ՝ Երևան քաղաքում և Շիրակի մարզում գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներ ձևավորված չեն: Այնուամենայնիվ, 2025 թվականի համար ակնկլավող արդյունքն ու արդյունքային ցուցանիշները բավարար չափով ապահովված են՝ ՀՀ 10 մարզերից 9-ում ձևավորված են գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներ, տարեկան նիստերը կայացած են:

**Առաջարկ.** 2026 թվականին նախատեսել տարեկան նիստերի սահմանված քանակ, հաստատել տարեկան աշխատանքային պլանները, ապահովել աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների կատարումը: Ձեռնարկել համապատասխան աշխատանքներ Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում Գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների ձևավորման և շարունակական գործունեության ապահովման համար:

### Գերակայություն 1.5 «Ռազմավարական փաստաթղթերում գենդերային ազդեցության գնահատման (մեյնսթրիմինգի) մեթոդաբանության մշակում և ներդրում»

Միջոցառման կատարումը վերապահված է ՀՀ փոխվարչապետի գրասենյակին:

Ռազմավարական փաստաթղթերում գենդերային գնահատման մեթոդաբանությունը մշակված է և ներկայացված է շահագրգիռ մարմինների դիտարկմանը:

Ամփոփում. միջոցառումը կատարված է: Գենդերային ազդեցության գնահատման մեթոդաբանությունը մշակված է:

Առաջարկ. 2026 թվականին նախատեսել գործողություններ՝ ուղղված ռազմավարական փաստաթղթերի մշակման շրջանակում գենդերային ազդեցության գնահատման մեթոդաբանության կիրառման խրախուսման և քաղաքականություն մշակող անձանց մասնագիտական կարողությունների բարելավման ուղությամբ:

### Գերակայություն 1.6 «Հանրային ծառայողների համար գենդերային հավասարության և գենդերազգայնության վերաբերյալ վերապատրաստումների մոդուլի մշակում և ներդրում»

Միջոցառման կատարման համար պատասխանատու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ՀՀ պետական բոլոր մարմինները ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ համատեղ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԵՄ-Ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան» ծրագրի համագործակցության շրջանակում «Գենդերային հավասարություն, գենդերազգայնություն և կանանց իրավունքներ» թեմայով վերապատրաստման մոդուլը մշակված է և գտնվում է վերջնականացման փուլում: 2026 թվականին մոդուլը կներկայացվի շահագրգիռ մարմինների քննարկմանը, որից հետո կկազմակերպվեն վերապատրաստման դասընթացներ հանրային ծառայողների, ինչպես նաև այլ պատասխանատու մարմինների համապատասխան մասնագետների համար:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի և ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության համագործակցության շրջանակում մշակվել և հանրայնացվել են գենդերազգայունության վերաբերյալ «Սեռազգայուն հաղորդակցություն», «Սեռազգայուն մշտադիտարկում» թեմաներով վերապատրաստման մոդուլները նախատեսված առցանց ուսուցման համար:

Ամփոփում. միջոցառումը կատարված է՝ «Գենդերային հավասարություն, գենդերազգայնություն և կանանց իրավունքներ» թեմայով վերապատրաստման մոդուլը գտնվում է վերջնականացման փուլում:

Առաջարկ. 2026 թվականի համար անհրաժեշտ է ավարտին հասցնել մոդուլի մշակման գործընթացը և հաստատված նյութերի հիման վրա շարունակել մասնագետների վերապատրաստումների գործընթացը:

**Գերակայություն 1.7 «Հանրային ծառայողների համար գենդերային հավասարության, գենդերազգայնության և կանանց իրավունքների վերաբերյալ համակարգված ուսուցման կազմակերպում՝ կանոնավորված, պարտադիր և շարունակական վերապատրաստման դասընթացների միջոցով»**

Միջոցառման կատարման համար պատասխանատու են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և պետական բոլոր մարմինները՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ համատեղ:

2025 թվականի ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետական, տեղական և միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցությամբ ապահովել է գենդերային հավասարության, գենդերազգայնության և կանանց իրավունքների, այդ թվում նաև՝ ընտանեկան բռնության, գենդերային բռնության, խտրականության դեմ պայքարի թեմաներով ոլորտային մասնագետների վերապատրաստումների իրականացումը. Այսպիսով.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի համագործակցությամբ «HELP» թվային հարթակում մշակվել և ներդրվել է «Գենդերային հավասարություն և գենդերային ինտեգրում» թեմայով առցանց դասընթացը, որը ներառել է նաև կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ թեմաներըդասընթացին մասնակցել են իրավասու պետական մարմինների **15** մասնագետ, դասընթացը մշտապես հասանելի է առցանց ուսուցման համար,

- համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 07.03.2025 թ.-ի N 22-Ա/1 հրամանի հավելվածի 4.1 կետի՝ ԱՍՀՆ Միասնական սոցիալական ծառայության տարբեր տարածքային կենտրոնների **30** սոցիալական աշխատողներ վերապատրաստվել են «Ընտանեկան և կենցաղային բռնությունը և հաղթահարման ուղիները» թեմայով, դասընթացի շրջանակում անդրադարձ է կատարվել նաև գենդերային հավասարությանն ու գենդերազգայուն մոտեցումներին առնչվող հարցերին,

- համաձայն ՀՀ կառավարության 23.04.2025թ.-ի N 482-Լ որոշման հավելված 2-ի գերակայություն 5.6 կետի՝ ԱՍՀՆ Միասնական

սոցիալական ծառայության տարբեր տարածքային կենտրոնների **22** սոցիալական աշխատողներ վերապատրաստվել են «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը. հիմնական նպատակներն ու ակնկալվող արդյունքները» թեմայով, վերապատրաստման դասընթացին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի շրջանակում իրականացված օրենսդրական փոփոխություններին, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց աջակցության և պաշտպանության մեխանիզմներին,

- համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 07.03.2025 թ.-ի N 22-Ա/1 հրամանի հավելվածի 4 կետի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության 23.04.2025թ.-ի N 482–Լ որոշման հավելված 2-ի գերակայություն 1 կետ 7-ը՝ ԱՍՀՆ Միասնական սոցիալական ծառայության տարբեր տարածքային կենտրոնների **30** աշխատող վերապատրաստվել են «Խտրականության արգելք. իրավահավասարության ապահովում» թեմայով:

*Տարբեր մարմինների կողմից իրականացված վերապատրաստումներին անդրադարձ է կատարվում նաև հաջորդիվ ներկայացվող միջոցառումների շրջանակում:*

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին պետք է ապահովել մասնագետների պարտադիր շարունակական վերպատրաստումների գործընթացը՝ հիմված հաստատված թեմատիկ մոդուլների վրա:

**Գերակայություն 1.9 «Լրատվամիջոցների հետ համագործակցությամբ հանրային իրազեկվածության բարձրացում՝ քաղաքական և հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց (այդ թվում՝ խոցելի խմբերի) լիարժեք և ներառական մասնակցության կարևորության վերաբերյալ»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գենդերային հավասարության, կանանց և տղամարդկանց իրավահավասարության և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում լիարժեք մասնակցության, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան

բռնության կանխարգելման և հարակից թեմաների վերաբերյալ 2025 թվականին իրականացրել է իրազեկման և լուսաբանման շարունակական աշխատանքներ՝ համագործակցելով լրատվամիջոցների և քաղհասարակության ներկայացուցիչների հետ:

2025 թվականի ընթացքում Նախարարության պաշտոնական կայքէջերի միջոցով տարածվել են բազմաթիվ տեղեկատվական նյութեր՝

- Ընտանեկան բռնության դեմ պայքարի շրջանակում պետությունը շարունակում է համակարգված աշխատանքներ իրականացնել օրենսդրական դաշտի բարելավման և ծառայությունների լավարկման ուղղությամբ,
- ԱՍՀ նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը մասնակցել է «ՀԱՎԱՍԱՐ – ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի արդյունքների ամփոփիչ միջոցառմանը,
- ԱՍՀ նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը մասնակցել է «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակի» ամենամյա միջազգային քարոզարշավի մեկնարկին նվիրված միջոցառմանը,
- Տեղի է ունեցել Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման խորհրդի ընդլայնված նիստը,
- Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման խորհրդի ընդլայնված նիստի վերաբերյալ,
- Երկօրյա աշխատաժողով՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի իրավական կարգավորումների շրջանակի, առկա մարտահրավերների ու աշխատանքների քննարկման նպատակով,
- Հանրային հեռուստաընկերության անդրադարձը՝ Հայաստանում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի իրականացման մանրամասներին
- Ազգային ժողովը 94 կողմ ձայնով վավերացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) 190-րդ «Բռնության և ոտնձգության մասին» կոնվենցիան,
- Տեղի է ունեցել «Հավասար վարձատրություն, արժանապատիվ աշխատանք, երկխոսություն գենդերային արդարության մասին» խորագրով աշխատաժողովը,
- Ամփոփվել են «Առաջնորդության վերելք. խթանելով կանանց առաջխաղացումը կարիերայում» շարունակական ուսուցման նախաձեռնության երկրորդ փուլի արդյունքները,

- Ընտանեկան ու կենցաղային բռնության, գենդերային հիմքով բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի շրջանակում իրականացվել է վերապատրաստման դասընթաց,
- Աջակցության կենտրոնների ծառայություններ՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց,
- Տեղի է ունեցել «ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությունը. առողջապահության և սոցիալ-տնտեսական ոլորտների շրջանակում անելիքները» խորագրով աշխատանքային քննարկումը,
- Տեղի է ունեցել Կանանց հարցերով խորհրդին կից աշխատանքային խմբի հանդիպումը,
- Հաստատվել է ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունն ու միջոցառումների ծրագիրը,
- Տեղի է ունեցել «Ժողովրդագրական փոփոխություն և գենդերային հավասարություն» թեմայով հարակից քննարկումը,
- Տեղի է ունեցել ՄԱԿ Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 69-րդ նստաշրջանի հարակից քննարկումը,
- Տեղի է ունեցել ՄԱԿ Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի 69-րդ նստաշրջանի նախարարական կլոր սեղանը,
- Ապաստարանի ծառայություն, աջակցության տարաբնույթ ծրագրեր. պաշտպանության ինչ միջոցներ է ձեռնարկում պետությունը բռնության ենթարկված կանանց համար,
- Կանանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացվող աշխատանքների, ընտանեկան բռնության և մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց պետության կողմից տրամադրվող ծառայությունների և այլնի մասին,
- Հայաստանը կունենա ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հաշվառման առաջին թվայնացված միասնական համակարգը,
- «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագիրը» հավանության է արժանացել Կառավարության նիստում,
- «Գենդերային բռնության կանխարգելումը Հայաստանում. ինչ է արվել» Լուրերի անդրադարձը:

**Ամփոփում.** միջոցառումը կատարված է:

**Առաջարկ.** անհրաժեշտ է ընդլայնել համագործակցությունը լրատվամիջոցների հետ՝ նպաստելով հանրության իրազեկվածության բարձրացմանը մարզային և համայնքային մակարդակներում, իրականացնել

համապետական իրազեկման արշավներ և միջոցառումներ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների, գենդերային հավասարության, բռնության և խտրականության բոլոր դրսևորումների բացառման և հարակից թեմաների վերաբերյալ:

### Գերակայություն 1.11 «Կնոջ դերն ու նշանակությունը բարձրացնելու նպատակով մեդիա հարթակներում լուսաբանել և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կայացման գործում մասնագիտական զգալի ներդրում ունեցած կանանց»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է:

2025 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մեդիա հարթակներում հասարակության մեջ կնոջ դերի, կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և իրավունքների, գենդերային հավասարության և հարակից այլ թեմաների վերաբերյալ մշակվել և տարածվել են բազմաթիվ նյութեր՝ սոցիալական հոլովակներ, տեղեկատվական/իրազեկման հոդվածներ, ոլորտային հարցազրույցներ:

Նախարարության նախաձեռնությամբ մեկնարկել է սոցիալական հոլովակների նոր շարք, որի շրջանակում հանրության են ներկայացվում կանայք, ովքեր պատմում են ընտանիքի և աշխատանքի հավասարակշռման, բիզնեսի և երեխաների խնամքի համատեղման, հանրային գործունեության և հասարակության մեջ կնոջ վերաբերյալ արմատացած կարծրատիպերի հաղթահարման իրենց փորձի մասին: «Զեռներեց Արևիկ Ուզունյանը պատմում է սեփական բիզնեսի ստեղծման մասին» վերտառությամբ հոլովակը այդ հաջողված պատմություններից մեկի մասին է, որը ստեղծվել է ոգեշնչելու նույն ճանապարհն անցնող կանանց և աղջիկներին: Տեսանյութի դիտումների քանակը 42,980 է:

**Ամփոփում.** միջոցառումը կատարված է:

**Առաջարկ.** անհրաժեշտ է առավել ինտենսիվ աշխատանքներ իրականացնել հասարակության մեջ կանանց նկատմամբ առկա խտրականությունների և կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված տեղեկատվական նյութերի, հաղորդաշարերի ստեղծման և հանրայնացման ուղղությամբ՝ համագործակցելով մեդիա ոլորտի ներկայացուցիչների հետ: Ներկայացնել նաև մեդիա հարթակներում լուսաբանում ստացած տեսահոլովակների դիտումների քանակը:

### Գերակայություն 1.12 «Քաղաքացիական ծառայողների համար ընդհանրական կոմպետենցիաների մշակում և ներդնում՝ մասնավորապես ընգծելով և ներառելով գենդերազգայուն և ներառական բաղադրիչը»

Միջոցառման կատարման համար պատասխանատու է ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը։

ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ կատարել է քաղաքացիական ծառայողների համար նախատեսված ընդհանրական կոմպետենցիաների լրամշակում՝ դրանց մեջ զետեղվել են գենդերազգայուն և ներառական բաղադրիչներ։

Ամփոփում. միջոցառումը կատարված է։

Առաջարկ. 2026 թվականին, ըստ անհրաժեշտության, պետք է վերանայել քաղաքացիական ծառայողների համար նախատեսված ընդհանրական կոմպետենցիաները և ընդլայնել գենդերազգայուն և ներառական բաղադրիչների մասնաբաժինը՝ նախատեսելով նաև մասնագետների թեմատիկ վերապատրաստումներ։

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2. Սոցիալ-տնտեսական բնագավառում՝ աշխատաշուկայում, տնտեսության տարբեր ճյուղերում, աշխատանքային գործունեության մեջ գենդերազգայուն մոտեցումների խրախուսում, աշխատուժի գենդերային խզվածքի նվազում և աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմների բարելավում

Գերակայություն 2-ի շրջանակում բոլոր աշխատանքներն ուղղված են աշխատաշուկայի, զբաղվածության, տնտեսության ոլորտում գենդերազգայուն մոտեցումների խրախուսմանը, աշխատուժի սեռային խզվածքի նվազեցմանը, կանանց սոցիալ-տնտեսական ակտիվության խրախուսմանը և աշխատանքի պաշտպանության կառուցակարգերի բարելավմանը, ներառյալ՝ աշխատանքային գործունեության մեջ խնամառության աշխատանքի պաշտպանությանը:

2025 թվականին նախատեսված բոլոր **3** միջոցառումները ներառում են 2025-2028թթ. ժամանակաշրջանը՝ ենթադրելով կատարման պարբերական բնույթ:

**2025 թվականի համար նախատեսված միջոցառումներն են՝**

- ✓ «Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների շարունակական բարելավում (կառուցում, հիմնում, վերանորոգում)»,
- ✓ «Հայրության արձակուրդի մասին իրազեկման միջոցառումների, հանրային արշավների իրականացում»,
- ✓ «ՓՄՁ-ների համար տեղեկատվական և առցանց ուսուցման միասնական հարթակի ստեղծում՝ հատուկ ուշադրությամբ կանանց ձեռնարկատիրական գործունեության տեղեկատվական աջակցության հասանելիության և արդյունավետության բարձրացմանը»:

### Գերակայություն 2.3 «Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների շարունակական բարելավում (կառուցում, հիմնում, վերանորոգում)»

Միջոցառման կատարման համար պատասխանատու է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարարությունը՝ ՀՀ տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ:

Միջոցառումը կրում է շարունակական բնույթ: ՀՀ կառավարության 03.10.2024թ. N 1581-Ն որոշմամբ՝ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության **«Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող մանկապարտեզ և նախակրթարան»** ծրագրում ընդգրկված մանկապարտեզների և նախակրթարանների ցանկը:

Հաստատված **475** նախադպրոցական ուսումնական հաստատություններից **2025 թվականի դեկտեմբերի** դրությամբ կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել/վերանորոգվել է **275-ը**՝ 171 մանկապարտեզ և 104 նախակրթարան:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող մանկապարտեզ և նախակրթարան» ծրագրում ընդգրկված մանկապարտեզների և նախակրթարանների ցանկի համաձայն՝ ավարտին հասցնել սահմանված թվով նախադպրոցական ուսումնական հասատատությունների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման/վերանորոգման գործընթացը: Միջոցառման կատարման հաշվետվության մեջ պետք է անդրադարձ կատարել նաև երկարօրյա աշխատող և մսուր-մանկապարտեզների, ինչպես նաև նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերի թվերի փոփոխությանը:

## Գերակայություն 2.4 «Հայրության արձակուրդի մասին իրազեկման միջոցառումների, հանրային արշավների իրականացում»

Միջոցառման կատարման հիմնական պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի հետ համատեղ:

2025 թվականի ընթացքում գենդերային հավասարության ապահովման, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության համար բարենպաստ միջավայրի ձևավորման և ընտանիքահեն քաղաքականությունների առաջմղման համատեքստում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շարունակել է իրականացնել իրազեկման և լուսաբանման շարունակական աշխատանքներ՝ համագործակցելով ոլորտում գործունեություն ծավալող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ գենդերային հավասարության ոլորտում համագործակցություն ծավալող

«ՕքսԵՋԵՆ» հիմնադրամի կողմից «ՀԱՎԱՍԱՐ» ծրագրի շրջանակում պատրաստվել է «Ազատագրված տղամարդիկ» 6 մասից բաղկացած ֆիլմաշարը՝ ուղղված ընտանիքում հայրերի դերի կարևորությանը, հասարակության մեջ կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերի ու տարընկալումների վերացմանը, ընտանիքում և երեխայի խնամքի գործընթացում կանանց և տղամարդկանց լիարժեք ու հավասար մասնակցությանը:

Ֆիլմերը ցուցադրվում են պարբերաբար՝ հանրայնացվելով իրազեկման տարբեր հարթակներով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը քաղաքացիների և կազմակերպությունների կողմից կատարված հեռախոսազանգերի, ներկայացված հարցումների շրջանակում պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել հայրության արձակուրդին առնչվող հարցերի վերաբերյալ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է՝ հանրային արշավների, իրազեկման միջոցառումների պլանի, իրականացված աշխատանքների վերաբերյալ որակական և քանակական ամբողջական տվյալներ առկա չեն:

Առաջարկ. 2026 թվականին անհաժեշտ է մշակել և հաստատել «Հայրության արձակուրդի մասին իրազեկման միջոցառումների, հանրային արշավների իրականացման» պլանը, որի հիման վրա ամբողջ տարվա ընթացքում ապահովել միջոցառման կատարումը ազգային, մարզային և համայնքային մակարդակներում՝ ներկայացնելով ամփոփ հաշվետվություններ:

### Գերակայություն 2.8 «ՓՄՁ-ների համար տեղեկատվական և առցանց ուսուցման միասնական հարթակի ստեղծում՝ հատուկ ուշադրությամբ կանանց ձեռնարկատիրական գործունեության տեղեկատվական աջակցության հասանելիության և արդյունավետության բարձրացմանը»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է:

Կանանց և աղջիկների սոցիալ-տնտեսական խոցելիության նվազեցումը, այդ թվում՝ կլիմայական փոփոխություններով պայմանավորված ռիսկերի համատեքստում, հանդիսացել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջնահերթություններից և դիտարկվել է որպես ներառական և կայուն տնտեսական զարգացման առանցքային բաղադրիչ:

ՓՄՁ-ների աջակցությանը, կանանց ձեռնարկատիրական հնարավորությունների ընդլայնմանը, ֆինանսական և թվային

կարողությունների զարգացմանը, ինչպես նաև տեղեկատվական և խորհրդատվական աջակցության մեխանիզմների կատարելագործմանը վերաբերող միջոցառումները ամբողջությամբ ինտեգրվել են «**Հայաստանի ՓՄՁ մրցունակության 2026–2030 թվականների ռազմավարական ծրագրի» նախագծում**:

Ռազմավարական ծրագիրը մշակվել է գենդերային զգայուն քաղաքականության, ներառական տնտեսական աճի և տարածքային համաչափ զարգացման սկզբունքների հիման վրա՝ նախատեսելով, հետևյալ առանցքային ուղղությունները.

- կանանց ձեռնարկատիրական գործունեության խթանում և տնտեսական ներառականության բարձրացում,

- ոչ խտրական և թիրախային ֆինանսական գործիքների կիրառմամբ ֆինանսական հասանելիության ընդլայնում,

- ձեռնարկատիրական կարողությունների, ֆինանսական և թվային գրագիտության զարգացում,

- մարզաբնակ և կլիմայական ռիսկերի նկատմամբ առավել խոցելի խմբերին պատկանող կին ձեռներեցների համար թիրախային աջակցություն,

- թվային հարթակների զարգացման և կիրառման միջոցով պետական աջակցության ծրագրերի և ծառայությունների մատչելիության ապահովում:

Հարկ է նշել, որ Ռազմավարական ծրագրի նախագիծը մշակման ընթացքում անցել է միջգերատեսչական քննարկումների փուլը և 2025 թվականի դեկտեմբերի 16-ին ներկայացվել է ՓՄՁ զարգացման խորհրդի նիստում, ինչը վկայում է դրա համադրվածության մասին ոլորտային քաղաքականության ընդհանուր օրակարգի հետ:

Ռազմավարական ծրագրի ընդունումից հետո ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից նախատեսվում է համապատասխան միջոցառումների փուլային իրականացում, այդ թվում՝ թվային հարթակների գործառնական զարգացում ու կիրառում, ինչը հնարավորություն կտա ապահովել կանանց տնտեսական ներգրավվածության և մրցունակության բարձրացման կայուն և երկարաժամկետ արդյունքներ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է մասամբ:

Առաջարկ. 2026 թվականին տեսանելի աշխատանքներ իրականացնել ՓՄՁ-ների համար տեղեկատվական և առցանց ուսուցման միասնական հարթակի ստեղծման ուղղությամբ, որը պետք է խթանի կանանց ձեռնարկատիրական գործունեությունն ու ակտիվությունը:

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3. Կրթության և գիտության ոլորտում գենդերային խտրականության հաղթահարում, կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցության խթանում ու հավասար հնարավորությունների ընդլայնում

Սույն գերակայության շրջանակում բոլոր աշխատանքներն ուղղված են կրթության և գիտության ոլորտում աղջիկների և տղաների, կանանց և տղամարդկանց հավասարակշռված ներկայացվածությանն ու արդյունավետ մասնակցությանը՝ հանուն անհատի ներուժի բացահայտման և զարգացման, ինչպես նաև հասարակության և պետության առաջխաղացման:

2025 թվականին նախատեսված բոլոր **9** միջոցառումները ներառում են 2025-2028թթ. ժամանակաշրջանը՝ ենթադրելով կատարման պարբերական բնույթ:

**2025 թվականի համար նախատեսված միջոցառումներն են.**

- ✓ «Հանրակրթական ուսումնամեթոդական նյութերի և ծրագրերի, այդ թվում՝ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակման, գնահատման և երաշխավորման գործընթացներում գենդերազգայուն չափանիշների շարունակական վերանայում (ըստ անհրաժեշտության)»,

- ✓ «Հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի վերանայման արդյունքում՝ գենդերային հավասարության վերաբերյալ նյութերի շարունակական վերանայում (ըստ անհրաժեշտության)»,

- ✓ «Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի վերանայման արդյունքում՝ «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակում առողջ ապրելակերպի (մարդու և կանանց իրավունքների, գենդերային հավասարության, գենդերային բռնության, վերարտադրողական առողջության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների ռիսկերի և բացասական հետևանքների) թեմաների ուսուցում»,

- ✓ «Նախադպրոցական, հանրակրթական, նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների (համաձայնությամբ) վարչական և մանկավարժական աշխատակազմի/ դասավանդողների շրջանում գենդերային հավասարության թեմաների վերաբերյալ համապարփակ վերապատրաստումների շարունակական կազմակերպում»,

- ✓ «Բուհերում գործող ընթացակարգերի բարելավում՝ սովորողների շրջանում գենդերային բռնության, ներառյալ՝ սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման և դրանց վերաբերյալ իրազեկման նպատակով»,

- ✓ «Կանանց և տղամարդկանց համար սեռով /ոչ ավանդական/ մասնագիտություններ զբաղմունքներում հավասար ներգրավվածություն ապահովելու նպատակով հատուկ թիրախային միջոցառումների իրականացում»,

- ✓ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և հաշվառման համակարգի գործարկում»,

- ✓ «Գիտական հետազոտություններում կանանց մասնակցությունն ընդլայնող միջոցառումների իրականցում»,

- ✓ «Նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության ուսումնական հաստատություններում գենդերային գիտելիքների ուսուցանում»:

**Գերակայություն 3.1 «Հանրակրթական ուսումնամեթոդական նյութերի և ծրագրերի, այդ թվում՝ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակման, գնահատման և երաշխավորման գործընթացներում գենդերազգայուն չափանիշների շարունակական վերանայում (ըստ անհրաժեշտության)»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

2025 թվականին «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից դասագրքերի գնահատման

բնութագրիչներում ներառված է չափանիշ, որի համաձայն՝ դասագրքի բովանդակությունը պետք է զերծ լինի խտրականություն, բռնություն պարունակող, բարոյական նորմերին չհամապատասխանող նյութերից՝ տեքստերից, պատկերներից, արտահայտություններից և առաջադրանքներից, իսկ դասագրքերի գնահատումն իրականացնող մանկավարժ-հոգեբանի և նկարիչ-ձևավորողի համար նախատեսված սանդղակում նախատեսված են խտրականությունը բացառող նկարների, տեքստերի, առաջադրանքների առկայության վերաբերյալ կետեր:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. շարունակել հանրակրթական ուսումնամեթոդական նյութերի և ծրագրերի, այդ թվում՝ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների վերանայման գործընթացը գենդերազգայուն չափանիշների ներդրման համատեքստում՝ ըստ անհրաժեշտության կատարել փոփոխություններ և կատարված փոփոխությունների հիման վրա ապահովել մասնագետների վերապատասրտումների իրականացումը: Տեղեկություն տրամադրել նաև մշտադիտարկման արդյունքում չափանիշի ունեցած ազդեցության մասին:

### Գերակայություն 3.2 «Հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի վերանայման արդյունքում՝ գենդերային հավասարության վերաբերյալ նյութերի շարունակական վերանայում (ըստ անհրաժեշտության)»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

2025 թվականին **«Հասարակագիտություն»** առարկայի չափորոշչում և ծրագրում ներառվել են թեմաներ և վերջնարդյունքներ, որոնք վերաբերում են գենդերային խտրականությանը: **«Ես և շրջակա աշխարհը»** առարկայի չափորոշչում և ծրագրում ներառված են գենդերային հավասարության, ինչպես նաև կարծրատիպերի և կարծրատիպային ընկալումների փոփոխությանն ուղղված թեմաներ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. շարունակել հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի վերանայման գործընթացը՝ ապահովելով գենդերային հավասարության և գենդերազգայուն մոտեցումների վերաբերյալ թեմաների ներառումը՝ ներկայացնելով վերանայումների արդյունքում կատարված փոփոխությունների վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ:

**Գերակայություն 3.3 «Հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի վերանայման արդյունքում՝ «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակում առողջ ապրելակերպի (մարդու և կանանց իրավունքների, գենդերային հավասարության, գենդերային բռնության, վերարտադրողական առողջության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների ռիսկերի և բացասական հետևանքների) թեմաների ուսուցում»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

Հանրակրթության նոր չափորոշչի ներդրման շրջանակում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, ՄԱԿ-ի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակների հետ համագործակցությամբ ստեղծված բազնամասնագիտական աշխատանքային խմբի կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարի 28.11.2023թ.-ի N 2456-Ա հրամանով գործածության երաշխավորված «5-11-րդ դասարանների «Առողջ ապրելակերպ» խմբակի չափորոշչի և ուսումնական ծրագրի հիմնական վերջնարդյունքների հիման վրա մշակվել են «Առողջ ապրելակերպ» դասընթացի 5-ից 11-րդ դասարանների ուսուցչի ձեռնարկները:

2025-2026թթ. ուսումնական տարվանից դասընթացը մեկ կիսամյակ տևողությամբ ներդրվել է ամբողջ հանրապետության 5-ից 11-րդ դասարաններում: **«Առողջ ապրելակերպ»** դասընթացի ձեռնարկներում, ի թիվս առողջ սնուցման, ֆիզիկական ակտիվության խթանման, հոգեկան առողջության, պատասխանատու վարքագծի, ինքնակարգավորման, սթրեսակայունության, ծխախոտի օգտագործման, ալկոհոլի չարաշահման վնասների, թմրամոլության կանխարգելման վերաբերյալ դասաժամերի, ընդգրկված են նաև թեմաներ՝ մարդու և կանանց իրավունքների, գենդերային հավասարության, գենդերային բռնության, վերարտադրողական առողջության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների ռիսկերի և բացասական հետևանքների մասին:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. ապահովել ամբողջ հանրապետության 5-ից 11-րդ դասարաններում ներդրված «Առողջ ապրելակերպ» դասընթացի շարունակական վերանայումը՝ ըստ անհրաժեշտության կատարել փոփոխություններ՝ ընդլայնելով գենդերային հավասարության, կանանց իրավունքների, գենդերային բռնության և հարակից այլ թեմաների շրջանակը:

Իրականացնել դասընթացը վարող ուսուցիչների կարողությունների զարգացմանն ուղղված շարունակական աշխատանքներ։

### Գերակայություն 3.4 «Նախադպրոցական, հանրակրթական, նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների (համաձայնությամբ) վարչական և մանկավարժական աշխատակազմի/ դասավանդողների շրջանում գենդերային հավասարության թեմաների վերաբերյալ համապարփակ վերապատրաստումների շարունակական կազմակերպում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնակցությամբ։

- **Հանրակրթության ոլորտ**

2025 թվականին «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) փորձագետների և մենթոր դպրոցների օգնությամբ 207 խմբի համար իրականացվել են հեռավար ձևաչափով վերապատրաստումներ «**Գենդեր արձագանքող ուսուցումը դպրոցում»** թեմայով՝ **4394** ուսուցչի մասնակցությամբ։ «Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ մշակվել է **«Ապատեղեկատվության դեմ պայքար. ինքնության հիմքով ձևավորված կարծրատիպեր»** վերտառությամբ ձեռնարկը, որի հիման վրա կազմակերպվել են հեռավար դասընթացներ 54 խմբի համար՝ **1114** ուսուցչի մասնակցությամբ։ Դասընթացները միտված են եղել կրթական համակարգում քննադատական և վերլուծական մտածողության, մեդիագրագիտության և թվային անվտանգության խրախուսմանն ու կեղծ և մտաշահարկող (մանիպուլատիվ) տեղեկատվության տարբերակմանը։

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գենդերային հավասարության պորտֆելի հետ համագործակցությամբ կազմակերպվել են իրազեկման միջոցառումներ ավագ դպրոցի **1000** աշակերտների շրջանում՝ աշակերտների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են գենդերային հավասարության, խնամքի, սեռով պայմանավորված մասնագիտությունների ընտրության վերաբերյալ թեմաները։ Այս արշավի շրջանակում *է մշակվել նաև «Մասնագիտություն՝ առանց «բայց»-երի (հավասար հնարավորություններ, անսահման ընտրություն)» ծրագիրը, որը կիրառումից առաջ փորձաքննվել է*

*«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից:*

- **Միջին մասնագիտական կրթության ոլորտ**

Մասնագիտական կրթության ոլորտում «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի» կողմից շարունակվել է մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչական աշխատողների վերապատրաստումները: Վերպատրաստման համար նախատեսված բոլոր թեմաներն արդեն իսկ մշակված են գենդերազգայուն սկզբունքով: 2025 թվականին վերապատրաստվել է **900** մասնագետ:

- **Բարձրագույն կրթության ոլորտ**

Երևանի պետական համալսարանի շարունակական կրթության կենտրոնը 2025-2026թթ. ուսումնական տարվա գործողությունների ծրագրում նախատեսել է վերապատրաստումների շարք, որն իր մեջ է ներառում նաև գենդերային հավասարությանը վերաբերող բաղադրիչներ:_Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանում կազմակերպվել է «Կնոջ դերի փոխակերպումը ժամանակակից հայ գրողների երկերում» թեմայով սեմինար, որին հաջորդել է քննարկում ժամանակակից հասարակության մեջ գենդերային հիմնահարցերի վերաբերյալ (30 մասնակից), Ֆրանսերենի և ռոմանական բանասիրության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Bridging cultures: Ending violence against women» խորագրով միջոցառումը, որը նպատակ ուներ խթանել միջմշակութային երկխոսությունը և բարձրացնել իրազեկվածությունը կանանց նկատմամբ բռնության կանխարգելման հիմնախնդիրների վերաբերյալ (30 մասնակից)։ Հայաստանի կինոյի հիմնադրամի և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի համագործակցությամբ տեղի է ունեցել առաջին հայ կին վավերագրող-ռեժիսոր, սցենարիստ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռոզա Ֆրանգուլյանի «Երգում են աշխարհի հայերը» (1968թ.) վավերագրական ֆիլմի ցուցադրությունը, որը նվիրված է ռեժիսորի ծննդյան 100-ամյակին։ Ֆիլմի դիտումն ու դրան հաջորդող քննարկումները միտված են եղել ոչ միայն Ռոզա Ֆրանգուլյանի արվեստի վերարժևորմանը, այլև ժամանակակից գենդերային հարցերի շուրջ երկխոսության խորացմանը՝ ընդգծելով կին արվեստագետների փորձառության արդիականությունն ու կարևորությունը ոլորտի զարգացման մեջ։ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական

բժշկական համալսարանի աշխատակազմի համար (83 մասնակից) կազմակերպվել է գենդերային հավասարության թեմայով իրազեկման դասընթաց, որի ընթացքում ներկայացվել են ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումներն ու Կառավարության կողմից ձեռնարկված ռազմավարական միջոցառումները: Ռուս-հայկական համալսարանում գենդերային հավասարության թեմաներով վերապատրաստումներին և քննարկումներին մասնակցել է վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի 100 ներկայացուցիչ:

2025 թվականի հունիսի 1-ից Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում գործում է Շվեդական ինստիտուտի կողմից ֆինանսավորվող և Շվեդիայի Լինշոփինգի համալսարանի կողմից համակարգվող **«Հավասարություն, իրավունքներ և ներառական գիտելիքներ. գենդերային ուսուցման ծրագիրը», որի** նպատակն է համալսարանի երիտասարդ դասախոսներին տրամադրել գիտելիքներ, հմտություններ և գործիքներ՝ կառավարման, առաջնորդության և քաղաքականության մշակման ոլորտներում գենդերային հավասարությունը խթանելու համար՝ համահունչ միջազգային ստանդարտներին: Ծրագիրը շարունակվելու է մինչև 2026 թվականի ավարտը: Հայաստանում Ամերիկյան համալսարանում աշխատակազմի և ուսանողների շրջանում սեռական ոտնձգության կանխարգելման և տեղեկացվածության բարձրացման նպատակով իրականացվել է դասընթաց, որը հաջողությամբ ավարտել է 441 անձ, այդ թվում՝ 221 վարչական աշխատակից և 220 դասախոս:

2025 թվականի ընթացքում գենդերային հավասարության, կանանց իրավունքների, կանանց նկատմամբ բռնության թեմաներով վերապատրաստումներ և իրազեկման միջոցառումներ են իրականացվել նաև Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Գավառի պետական համալսարանում, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին

- գենդերային հավասարության թեմաների վերաբեյալ վերապատարստումների կազմակերպման և իրականացման համար արդյունքային ցուցանիշների մշակում, վերապատրաստումների ազդեցության գնահատման մեթոդաբանության մշակում և ներդրում,

- գենդերային հավասարության թեմաների վերաբերյալ վարչական և մանկավարժական աշխատակազմի/դասավանդողների համապարփակ՝ ինստիտուցիոնալ վերապատրաստումների

կազմակերպում՝ թեմաների, մասնակիցների և հաստատությունների թվի, շահագրիգիռ կողմերի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների ներկայացմամբ,

- գենդերային հավասարության վերաբերյալ մշակված վերապատրաստման մոդուլների և ձեռնարկների շարունակական կիրառման ապահովում թվային գործիքների միջոցով,

- բարձրագույն ուսումնական հաստատություններում գենդերային հավասարության թեմաների վերաբերյալ դասավանդողների և ուսանողների համար իրականացվող իրազեկման և վերապատարստման միջոցառումների տարանջատում՝ այս թվում նաև համապատասխան թեմատիկ նյութերի (իրազեկման արշավների պլան, վերպատրաստման ձեռնարկներ և մոդուլներ) մշակում և կիրառում՝ իրականացված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների ներկայացմամբ:

### Գերակայություն 3.5 «Բուհերում գործող ընթացակարգերի բարելավում՝ սովորողների շրջանում գենդերային բռնության, ներառյալ՝ սեռական ոտնձգության դեպքերի կանխարգելման և դրանց վերաբերյալ իրազեկման նպատակով»

Միջոցառման կատարման պատասխանատուն է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համատեղ:

Երևանի պետական համալսարանը մշակել և ընդունել է «Սեռական ոտնձգության կանխարգելման քաղաքականություն և գենդերային հավասարության ապահովման պլանը»: Երկու փաստաթղթերն էլ ենթադրում են համալսարանում համապատասխան գործիքակազմերի ներդրում ուղղված սեռական ոտնձգությունների և գենդերային բռնության կանխարգելմանն ու արձագանքման մեխանիզմների լավարկմանը: Փաստաթղթերի կիրառումը նախատեսված է Երևանի պետական համալսարանի 2025-2030թթ. ռազմավարությամբ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում մշակվել և կիրառման է դրվել Էթիկայի կանոնագիրքը, որում մանրամասն նկարագրված է ուսումնառողների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև՝ փոխհարաբերությունները միմյանց, պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի հետ: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի

ազգային համալսարանում 2024 թվականին ընդունվել է Գենդերային հավասարության ծրագիրը, որով նախատեսված է կազմակերպել համալսարանի ուսանողների և դասախոսների համար գենդերային հավասարությանը վերաբերող թեմաներով վերապատրաստման դասընթացներ, իրականացնել ծրագրեր՝ համալսարանի կին աշխատողների մասնագիտական զարգացման և առաջընթացին աջակցելու նպատակով, խրախուսել համալսարանի արական սեռի աշխատողներին մասնակցելու գենդերային հավասարությունը խթանող քննարկումներին և նախաձեռնություններին: Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում մշակվել և շրջանառության մեջ է դրվել նաև ՀԳՊԱ Էթիկայի և բողոքների հանձնաժողովի կանոնների փաստաթուղթը: Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտում ևս կիրառման է դրվել Էթիկայի կանոնակարգը: Գավառի պետական համալսարանում գիտական խորհրդի կողմից ընդունվել է «ԳՊՀ էթիկայի կանոնները», «ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգը»: ԳՊՀ-ում գործում են Ակադեմիական անազնվության դեպքերը քննող հանձնաժողովը, ինչպես նաև՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո՝ օրենքի պահանջին համապատասխան, ձևավորվել և գործում է Գավառի պետական համալսարանի էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակը:

Առանցքայն կարևորություն ունեն կրթական ծրագրերում գենդերային հավասարության, կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան բռնության, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների վերաբերյալ թեմաների ինտեգրումը և ներառումը՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում առկա և հեռակա բակալավրի բոլոր 5 կրթական ծրագրերի շրջանակներում /Կինեզիոլոգիա, Փրկարարական գործ, Լրագրություն, Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ, Ֆիզիկական դաստիարակություն և ադապտիվ ֆիզիկական կուլտուրա/ ուսուցանվում է «Գենդերային գիտելիքների հիմունքներ» առարկան՝ 32 ժամ /առկա/ և 10 ժամ /հեռակա/ ընդհանուր լսարանային ծավալով, Հայաստանում Աերիկյան համալսարանի կրթական ծրագրերում դասավանդվող առարկաներն են «Գենդերային ուսումնասիրություններ», «Գենդերային հեռանկարներ», Հետազոտական նախագծեր՝ «Գենդերային ուսումնասիրություններ», «Սեռ/գենդեր և հասարակական փոփոխություն»: Տվյալ առարկաներում դասավանդվող ուսանողների ընդհանուր թվաքանակը 66 է:

**Ամփոփում.** միջոցառումը կատարված է:

**Առաջարկ.** շարունակել բարելավել բուհերում գործող ընթացակարգերը գենդերային բռնության, սեռական ոտնձգությունների դեպքերի

կանխարգելման, հայտնաբերման և արձագանքման նպատակով՝ վերանայելով ներդրված կանոնագրքերն ու ընթացակարգերը, ըստ անհրաժեշտության կատարել փոփոխություններ՝ ապահովելով գենդերային բաղադրիչի ներառումը, մշակել բուհերի կողմից աշխատանքների (վերապատրաստումներ, իրազեկման միջոցառումներ, ընթացակարգերի վերանայման աշխատանքներ) վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ձևաչափեր:

### Գերակայություն 3.6 «Կանանց և տղամարդկանց համար սեռով /ոչ ավանդական/մասնագիտություններ զբաղմունքներում հավասար ներգրավվածություն ապահովելու նպատակով հատուկ թիրախային միջոցառումների իրականացում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է ՀՀ բարձր տեխնոլոգիական և արդյունաբերության նախարարության հետ համատեղ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների (բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի) առկա և հեռակա ուսուցման ընդունելության գործընթացն իրականացվում է ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա: Այս գործընթացում պետությունն իրականացրել է իր քաղաքականությունը՝ պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտությունների համար շարունակելով ապահովել ուսման վարձի փոխհատուցում և խրախուսման մեխանիզմներ:

Ըստ հաստատված թվերի՝ 2024-2025թթ. ուսումնական տարվա համար պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ 2096 տեղերից ԲՏՃՄ ոլորտին հատկացվել է **1264-ը**՝ ընդհանուր տեղերի թվի **61%**-ը: ԲՏՃՄ ուղղություններով պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ընդունվածների թիվը 2024-2025թթ. ուսումնական տարում **5%-ով** աճել է 2023-2024թթ. ուսումնական տարվա համեմատ: Պետության կողմից ԲՏՃՄ մասնագիտական մանկավարժության կրթական ծրագրով սովորողների խրախուսման ծրագրի շրջանակներում (ամսական 70.000 ՀՀ դրամ կրթաթոշակ) 2024-2025թթ. ուսումնական տարում բուհեր են ընդունվել **304** ուսանող, մինչդեռ 2023-2024թթ. ուսումնական տարում նրանց թիվը կազմել է **251** ուսանող: Այս քաղաքականությունը 2024 թվականից տարածվել է նաև ագրարային ոլորտի մասնագիտությունների վրա, որի արդյունքում 2024-2025թթ. ուսումնական տարում ագրարային ոլորտի մասնագիտություններով բուհ է ընդունվել 220 ուսանող:

2025-2026թթ. ուսումնական տարվա ընդունելության մրցույթի արդյունքում ԲՏՃՄ մասնագիտություններով բուհեր են ընդունվել շուրջ 1500 դիմորդ:

Կարևոր է նշել, որ օրենսդրական վերջին փոփոխություններով պայմանավորված՝ ԲՏՃՄ ոլորտներում մասնագիտացած բարձրագույն կրթություն ունեցող անձանց մուտքը դպրոց դարձել է առավել դյուրին՝ համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի՝ եթե ուսուցչի թափուր տեղն առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթով չի համալրվում համապատասխան որակավորում ունեցող թեկնածուով, ապա հաջորդ մրցույթին կարող են դիմել նաև՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը՝ աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով:

**Ամփոփում.** միջոցառումը կատարված է:

**Առաջարկ.** 2026 թվականին պետք է ապահովել կանանց և տղամարդկանց համար սեռով /ոչ ավանդական/մասնագիտություններ զբաղմունքներում հավասար ներգրավվածություն ապահովելու նպատակով հատուկ թիրախային միջոցառումների իրականացման վերաբերյալ համալիր, համապարփակ հաշվետվությունների առկայություն՝ սեռով տարանջատված տվյալների ներկայացմամբ: Չնայած 2025 թվականին իրականացված տարբեր նախաձեռնություններին՝ սեռով /ոչ ավանդական/մասնագիտություններ զբաղմունքներում կանանց ներկայացվածության խթանմանն ուղղված ծրագրերը դեռևս մնում են ոչ բավարար՝ անհրաժեշտ են լրացուցիչ աշխատանքներ՝ ակնկալվող արդյունքի և արդյունքային ցուցանիշների սահմանմամբ:

### Գերակայություն 3.8 «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և հաշվառման համակարգի գործարկում»

Միջոցառման պատասխանատուն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ:

«Պարտադիր կրթությունից դուրս մնացած և պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում ներդրված է կրթությունից դուրս մնալու պատճառների նշման համակարգ: Ավելի ուշ կստեղծվի մեխանիզմ, որը հնարավորություն կտա տեղեկատվությունը տարանջատել՝ ըստ սեռի և կրթությունից դուրս մնալու պատճառների:

2025 թվականի մայիս ամսվա դրությամբ՝ կրթության համակարգում ընդգրկվել է **7308** սովորող, որից՝ **3329-ը** կրթության մեջ երբևէ չներառված երեխաներ են:

Ամփոփում. Միջոցառումը կատարված է:

Առաջարկ. «Պարտադիր կրթությունից դուրս մնացած և պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում ներդնել տվյալների տարանջատման մեխանիզմ, որը թույլ կտա առավել խորքային և համապարփակ տվյալներ ունենալ երեխաի կրթությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ:

### Գերակայություն 3.9 «Գիտական հետազոտություններում կանանց մասնակցությունն ընդլայնող միջոցառումների իրականացում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հետ համատեղ:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության գիտական դրամաշնորհային ֆինանսավորման շրջանակում կազմակերպվում են մի շարք դրամաշնորհային մրցույթներ, որոնք իրականացվում են գիտական և գիտատեխնիկական բնագավառներով և մասնագիտություններով՝ ըստ Ֆրասկատիի (Frascati) ձեռնարկում նշված հետազոտությունների ոլորտային խմբերի, այդ թվում՝ ԲՏՃՄ ուղղություններով, մասնավորապես.

- «Արհեստական բանականություն և տվյալագիտություն», «Քվանտային տեխնոլոգիաներ», «Ռոբոտատեխնիկա» մասնագիտություններով

գիտական թեմաների հայտերի մրցույթ, որի արդյունքում ֆինանսավորման են երաշխավորվել 7 նախագծեր, որոնց ղեկավարներից մեկը կին է,

- «Երկակի նշանակության գիտական նախագծեր 2025» մրցույթ, որն իրականացվում է «Բնական գիտություններ» ու «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա» բնագավառներով և ուղղված է երկակի նշանակության նոր տեխնոլոգիաների ստեղծմանը և դրանց պատրաստիության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև համապատասխան գիտահետազոտական աշխատանքների խթանմանը և այլն, որի արդյունքում ֆինանսավորման են երաշխավորվել 8 նախագծեր,

- «Փորձարարական մշակումների նախագծեր (Experimental Development Projects) 2025» մրցույթ, որն իրականացվում է «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ», «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառներով և ուղղված է գիտական հետազոտությունների և գործնական փորձի միջոցով նոր տեխնոլոգիաների, արտադրանքի, ծառայությունների, համակարգերի, մեթոդների ստեղծմանը կամ դրանց կատարելագործմանը:

Միաժամանակ, գիտության ոլորտում իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի ոլորտներում իրականացվող նախագծերից երեքի գիտական խմբերի ղեկավարները կանայք են: Վերջին չորս տարիների ընթացքում գիտության մեջ կին ղեկավարների ներգրավվածությունը խթանելու նպատակով 2020 և 2024 թվականներին կազմակերպվել է գիտության ոլորտի ղեկավար պաշտոններում կանանց կարողությունների զարգացմանն ուղղված երկու դրամաշնորհային մրցույթ, որոնց շրջանակներում ֆինանսավորման են երաշխավորվել համապատասխանաբար 15 և 31 նախագիծ:

**Ամփոփում.** Միջոցառումը կատարված է:

**Առաջարկ.** 2026 թվականին շարունակել իրականացնել գիտական հետազոտություններում կանանց մասնակցության և ներկայացվածության խթանմանն ուղղված հատուկ միջոցառումներ, հայտարարված դրամաշնորհային մրցույթներում հայտերի ուսումնասիրման և հաղթողների ընտրության փուլերում ապահովել սեռերի հավասարակշռությունը, մրցույթների արդյունքները ներկայացնել սեռով տարանջատված քանակական տվյալների առկայությամբ:

### Գերակայություն 3.11 «Նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության ուսումնական հաստատություններում գենդերային գիտելիքների ուսուցանում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

- **Միջին մասնագիտական կրթության ոլորտ**

ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ «Սեռը կապ ունի մասնագիտության ընտրության հետ, թե ոչ», «Գենդերային խտրականության հաղթահարում, կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցության խթանում, հավասար հնարավորությունների ընդլայնում, բարենպաստ միջավայրի ամրապնդում» խորագրով ինտերակտիվ խմբային քննարկումներ, վիդեոդիտումներ, հարցումներ «գենդեր» հասկացության, գենդերային կարծրատիպերի առանձնահատկությունների, գենդերային խտրականության, վարքագծի կանոնների, մարդու իրավունքների և արդարության վերաբերյալ: Անցկացվել են գենդերային հավասարության վերաբերյալ բաց դաս-քննարկումներ, որոնք համադրվել են սիմուլացիոն խաղերի հետ: Ուսանողները խմբերով բեմադրել են այնպիսի սոցիալական իրավիճակներ, որտեղ երևում են գենդերային կարծրատիպերը և խտրականությունը (օրինակ՝ աշխատանքի ընդունման գործընթաց, ուսումնական խմբում կամ համայնքային նախաձեռնությունում):

Անցկացվել են դասընթացներ «Հաղորդակցում» և «Գործարար հաղորդակցում» մոդուլների շրջանակներում գենդերային խտրականության հաղթահարման, կանանց և տղամարդկանց լիարժեք մասնակցության խթանման ու հավասար հնարավորությունների ընդլայնման թեմաների վերաբերյալ:

Նախատեսվում է շրջաբերական ուղարկել ուսումնական հաստատություններին՝ գենդերային գիտելիքների ուղղությամբ սովորողների իրազեկման բարձրացմանն ուղղված լրացուցիչ միջոցառուների իրականացման նպատակով:

- **Բարձրագույն կրթության ոլորտ**

**Երևանի պետական համալսարանում** գենդերային գիտելիքների ուսուցանման շրջանակում իրականացված իրազեկման և ուսուցողական միջոցառումները ունեցել են 200 մասնակից: **Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում** գենդերային

հավասարության, ինչպես նաև գենդերային բռնության՝ ներառյալ սեռական ոտնձգության կանխարգելման թեմաները ներառվել են «Հոգեբանություն», «Մանկավարժություն», «1-ին բուժօգնություն և քաղաքացիական պաշտպանություն», «Մանկավարժական վալեոլոգիա», «Մանկավարժական մարդաբանություն», «Շեղվող վարքի հոգեբանություն», «Անձի անհատական զարգացում» «Ընտանիքի հոգեբանություն» սոցիալական գիտությունների և հարակից առարկաների դասաժամերում: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում գործող ուսումնական պլաններում ներառված հասարակագիտական ուղղվածության դասընթացներում ներառվել են գենդերային գիտելիքների վերաբերյալ թեմաներ: **Հայաստանի ազգային ագրարային համալսարանում** իրականացվող որոշ կրթական ծրագրերի շրջանակներում դասավանդվող «Սահմանադրական իրավունք» առարկայի ծրագրում ներառված են նաև գենդերային հավասարության խնդիրները՝ ապահովելով դրանց տեսանելիությունն ու օրինականությունը: Ուսանողներին տրամադրվում է սեռային և գենդերային հավասարության իրավական և քաղաքական շրջանակները հասցեագրող բովանդակություն:
Գավառի պետական համալսարանի «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանում ներառված են «Կրիմինալոգիա», «Քրեական իրավունք», «Ընտանեկան իրավունք», «Աշխատանքային իրավունք», «Ժառանգման իրավունք» դասընթացները՝ որպես պարտադիր մասնագիտական առարկաներ, որոնց շրջանակներում ուսումնասիրվում են ընտանեկան բռնության, կանանց իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները, այդ թվում՝ գենդերային հավասարության ապահովման հիմքերն ու կառուցակարգերը:

2025թ.-ի ընթացքում **Գավառի պետական համալսարանի** ուսանողներն ու դասախոսները մասնակցել են ՀՀ ՄԻՊ աշխատակազմի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման կողմից կազմակերպված սեմինար-քննարկումներին՝ նվիրված ընտանիքում և աշխատավայրում բռնության կանխարգելման, գենդերային խտրականության բացառման հարցերին, քննարկել են պտղի սեռով պայմանավորված հղիության ընտրողական ընդհատման հետ կապված հարցերը:

**Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանում** 2025 թվականին «Իրավագիտություն» մասնագիտության երկու մագիստրոսական թեզեր վերաբերել են գենդերային հիմնահարցերին:

Ամփոփում. միջոցառումը կատարված է. միջին մասնագիտական և բարձրագույն կրթության ուսումնական հաստատություններում գենդերային բաղադրիչ պարունակող կրթական միջոցառումների թիվը շարունակում է մնալ ցածր, առկա չեն համապարփակ վիճակագրական տվյալներ:

**Առաջարկ.** 2026 թվականին իրականացնել աշխատանքներ նախնական, միջին մասնագիտական, բարձրագույն կրթության ուսումնական հաստատություններում գենդերային բաղադրիչ պարունակող կրթական միջոցառումների ընդլայնման ուղղությամբ, ներկայացնել իրականացված միջոցառումների և նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում գենդերային թեմաներով ուսուցանվողների վերաբերյալ համապարփակ հաշվետվություններ:

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 4.
## Առողջապահության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովում

Սույն գերակայության շրջանակում բոլոր աշխատանքներն ուղղված են մեծացնել կանանց հասանելիությունը հիմնական առողջապահական և վերարտադրողական առողջապահական ծառայություններին, հատկապես խոցելի խմբերի, գյուղական բնակավայրերի կանանց, հաշմանդամություն ունեցող կանանց և էթնիկ փոքրամասնությունների խմբերին պատկանող կանանց համար, այդ թվում՝ պետական բյուջեից տրամադրվող հատկացումները մեծացնելու և առողջության պարտադիր ապահովագրության համակարգում ներառելու ճանապարհով:

2025 թվականին նախատեսված բոլոր **8** միջոցառումները ներառում են 2025-2028թթ. ժամանակաշրջանը՝ ենթադրելով կատարման պարբերական բնույթ:

**2025 թվականի համար նախատեսված միջոցառումներն են՝**

- ✓ «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ներդրվող առողջության համապարփակ ապահովագրության համակարգում գենդերազգայուն չափանիշների կիրառում»,
- ✓ «Հղիության արհեստական ընդհատման դեղորայքային եղանակի հասանելիության ապահովում առողջապահական ոչ ստացիոնար հաստատություններում՝ օրենսդրական փոփոխությունների և գործառնական ընթացակարգերի ներդրման և իրազեկման միջոցով»,

- ✓ «Սեռական բռնության ենթարկված կանանց վարման՝ ներառյալ զոհակենտրոն մոտեցման վերաբերյալ, կլինիկական ուղեցույցի մշակում»,

- ✓ «Հետծննդյան շրջանում կանանց հետծննդաբերական դեպրեսիաների բացահայտման մեխանիզմների ներդնում»,

- ✓ «Առողջապահական հաստատությունների աշխատակիցների համար գենդերազգայունության բարձրացմանն ուղղված շարունակական վերապատրաստումների իրականացում՝ աշխատակիցների մոտ գենդերազգայուն և իրավունքահեն մոտեցումների զարգացման նպատակով»,

- ✓ «Վերարտադրողական առողջության ոլորտում գենդերային հավասարությունը խթանելու նպատակով միջոցառումների իրականացում՝ ներառելով տղամարդկանց, ճանաչելով նրանց դերը, պատասխանատվությունը ծննդաբերության և երեխայի խնամքին մասնակից ու աջակից լինելու համատեքստում»,

- ✓ «Առողջապահական կանխարգելիչ միջոցառումների սքրինինգային ծառայությունների իրականացում հավասար հիմունքներով՝ ազատությունից զրկված անձանց շրջանում»,

- ✓ «Բուժաշխատողների համար ՄԻԱՎ-ի թեմայով դասընթացների շարունակականության իրականացում ՄԻԱՎ-ով ապրող կանանց նկատմամբ խտրականության նվազման նպատակով»:

### Գերակայություն 4.1 «Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ներդրվող առողջության համապարփակ ապահովագրական համակարգում գենդերազգայուն չափանիշների կիրառում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

2025 թվականից արգանդի պարանոցի քաղցկեղի սքրինինգը համապատասխանեցվել է միջազգային ստանդարտներին և ներառվել է Առողջության համընդհանուր ապահովագրության փաթեթում, իսկ

01.01.2026թ.-ից հետո իրականացվում է մարդու պապիլոմա վիրուսի նկատմամբ թեսթավորմամբ՝ նախկին ՊԱՊ քսուքի հետազոտման փոխարեն: Կարևոր է նշել, որ հղիների նախածննդյան, հետծննդյան հսկողությունը, ծննդօգնության և հետծննյան բժշկական օգնության ծառայությունները ներառված են ինչպես ապահովագրվածների, այնպես էլ չապահովագրված անձանց համար ծառայությունների նախատեսված նվազագույն փաթեթում:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. իրականացնել շարունակական աշխատանքներ Առողջության համընդհանուր ապահովագրության համակարգում գենդերազգայուն չափանիշների վերանայման և բարելավման ուղղությամբ, ըստ անհրաշետության կատարել փոփոխություններ:

## Գերակայություն 4.2 «Հղիության արհեստական ընդհատման դեղորայքային եղանակի հասանելիության ապահովում առողջապահական ոչ ստացիոնար հաստատություններում՝ օրենսդրական փոփոխությունների և գործառնական ընթացակարգերի ներդրման և իրազեկման միջոցով»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

12.07.2024թ.-ի հուլիս 1-ի (ուժի մեջ է մտել 06.08.2024 թ.) N-317-Ն Օրենքով «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Օրենքում կատարվել են լրացումներ և փոփոխություններ, ինչի արդյունքում դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատումը մինչև 8 շաբաթական հղիության ժամկետում կարող է իրականացվել հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային պայմաններում մանկաբարձական և գինեկոլոգիական բժշկական օգնության և սպասարկման լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպություններում:

Դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատման դեպքում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կլինիկական ուղեցույցը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 13.06.2025 թ.-ի N 3569-Լ հրամանով:

2025 թվականին 50 մասնագետի համար վերոնշյալ ուղեցույցի հիման վրա կազմակերպվել են ՇՄԶ կրեդիտավորված դասընթացներ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ապահովել մասնագետների շարունակական վերապատրաստումները հղիության արհեստական ընդհատման դեղորայքային եղանակի վերաբերյալ՝ ներդնելով վերապատրաստումների ազդեցության գնահատման գործիքակազմ:

### Գերակայություն 4.3 «Սեռական բռնության ենթարկված կանանց վարման՝ ներառյալ զոհակենտրոն մոտեցման վերաբերյալ, կլինիկական ուղեցույցի մշակում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

«Սեռական բռնության ենթարկված կանանց բժշկական օգնության կազմակերպման և տրամադրման սկզբունքները» ուղեցույցը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի 17.06.2025 թ.-ի N 3569-Լ հրամանով:

Ուղեցույցի շրջանակում իրականացվել են վերապատրաստման դասընթացներ բուժաշխատողների համար Երևանում և Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի մարզերում:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ապահովել բուժաշխատողների շարունակական վերապատրաստումները սեռական բռնության ենթարկված կանանց բժշկական օգնության կազմակերպման և տրամադրման վերաբերյալ՝ ներառելով Երևան քաղաքը և ՀՀ բոլոր մարզերը:

### Գերակայություն 4.4 «Հետծննդյան շրջանում կանանց հետծննդաբերական դեպրեսիաների բացահայտման մեխանիզմների ներդրում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

ՀՀ առողջապահության նախարարի 25.12.2025թ.-ի N 8006-Լ հրամանով հաստատվել է «Հետծննդյան դեպրեսիայի հայտնաբերման և ուղղորդման ուղեցույցը»:

Իրականացվել է դասընթաց Երևանի 5 և բոլոր մարզերի մեկական բժշկական կազմակերպությունների բուժաշխատողների շրջանում: Նախատեսվում է մինչև 2026 թվականի վերջը հետծննդյան դեպրեսիաների հայտնաբերման հարցաշարը ինտեգրել ԱԱՊ-ում Երեխայի զարգացման գնահատման գործիքի հետ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ապահովել մասնագետների շարունակական վերապատրաստումները, հետծննդյան դեպրեսիաների հայտնաբերման հարցաշարը ինտեգրել ԱԱՊ-ում:

### Գերակայություն 4.5 «Առողջապահական հաստատությունների աշխատակիցների համար գենդերազգայունության բարձրացմանն ուղղված

**շարունակական վերապատրաստումների իրականացում՝ աշխատակիցների մոտ գենդերազգայուն և իրավունքահեն մոտեցումների զարգացման նպատակով»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտին առաջարկվել է 13.06.2025 թ.-ի N 3569-Լ, 17.06.2025 թ.-ի N 3612-Լ և 25.12.2025թ.-ի N 8006-Լ հրամաններով համապատասխանաբար հաստատված՝ «Դեղորայքային եղանակով հղիության արհեստական ընդհատման դեպքում բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույցը», «Սեռական բռնության ենթարկված կանանց բժշկական օգնության կազմակերպման և տրամադրման սկզբունքները ուղեցույցը» և «Հետծննդյան դեպրեսիայի հայտնաբերման և ուղղորդման ուղեցույցը» ներառել հետբուհական կրթական ծրագրերի մեջ:

Մասնագետների վերապատրաստումներին անդրադարձ է կատարվել նախորդ կետերում՝ Գերակայություն 4-ի 2,3,4 կետեր:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ապահովել մասնագետների շարունակական վերապատրաստումները՝ ավելացնելով տարեկան կազմակերպվող վերապատրաստումների և վերապատրաստումներին մասնակցող անձանց թիվը, ներկայացնել համալիր հաշվետվություններ սույն կետի շրջանակում կատարված միջոցառումների վերաբերյալ:

**Գերակայություն 4.8 «Վերարտադրողական առողջության ոլորտում գենդերային հավասարությունը խթանելու նպատակով միջոցառումների իրականացում՝ երառելով տղամարդկանց, ճանաչելով նրանց դերը, պատասխանատվությունը ծննդաբերության և երեխայի խնամքին մասնակից ու աջակից լինելու համատեքստում»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

2025 թվականին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հետ համատեղ՝ ծննդաբերության, երեխայի խնամքի ու ծնողավարության մեջ տղամարդկանց ներգրավվածության մեծացման կարևորության վերաբերյալ իրականացվել են դասընթացներ «Հայրերի դպրոց» ծրագրի շրջանակում Արագածոտնի,

Շիրակի, Տավուշի, Լոռու մարզերում և Երևանում: Միջոցառումներին մասնակցել է 100 տղամարդ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ապահովել ծննդաբերության, երեխայի խնամքի և ծնողավարության թեմաների վերաբերյալ առնվազն 150 տղամարդկանց համար իրազեկման միջոցառումների իրականացումը՝ ներառելով Երևան քաղաքը և ՀՀ բոլոր մարզերը, ներդնել իրականացված աշխատանքների ազդեցության գնահատման գործիքակազմ:

## Գերակայություն 4.10 «Առողջապահական կանխարգելիչ միջոցառումների՝ սքրինինգային ծառայությունների իրականացում հավասար հիմունքներով ազատությունից զրկված կանանց շրջանում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ:

«Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 26.05.2006թ.-ի N 825-Ն որոշման մեջ նախատեսվում են փոփոխություններ, համաձայն որի սքրինինգային ծառայությունները հավասար հիմունքներով ազատությունից զրկված կանանց շրջանում նույնպես իրականացվելու են: Որոշման նախագիծը նախատեսվում է ներկայացնել ՀՀ Վարչապետի աշխատակազմ:

2025 թվականին ՀՀ Արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող ազատազրկված կանանց շրջանում իրականացվել են հետևյալ սքրինինգային հետազոտությունները՝

- HCV սքրինինգ արագ ախտորոշիչ թեստերով՝ թվով 135,
- HBV սքրինինգ արագ ախտորոշիչ թեստերով՝ թվով 105,
- HIV սքրինինգ արագ ախտորոշիչ թեստերով՝ թվով 120,
- սիֆիլիսի սքրինինգ արագ ախտորոշիչ թեստերով՝ թվով 125,
- կրծքագեղձի քաղցկեղի վաղ հայտնաբերման սքրինինգ՝ մամոգրաֆիկ հետազոտություն՝ թվով 21,

- արգանդի պարանոցի քաղցկեղի հայտնաբերման սքրինինգ՝ ՊԱՊ քսուքի հետազոտություն՝ թվով 12,

- հոգեկան առողջության գնահատման սքրինինգ՝ թվով 87:

Ամփոփում. միջոցառումը կատարված է՝ ազատությունից զրկված կանանց համար առողջապահական ծառայություններից հասանելիությունը շարունակում է մնալ սահմանափակ:

Առաջարկ. 2026 թվականին անհրաժեշտ է ավարտին հասցնել ազատությունից զրկված կանանց համար հավասար հիմունքներով սքրինգային հետազոտություններից և այլ անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ իրավական կարգավորումների ընդունման գործընթացը, ապահովել առողջապահական ծառայություններից օգտվող անազատության մեջ գտնվող կանաց թվի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների առկայությունը:

### Գերակայություն 4.12 «Բուժաշխատողների համար ՄԻԱՎ-ի թեմայով դասընթացների շարունակականության իրականացում ՄԻԱՎ-ով ապրող կանանց նկատմամբ խտրականության նվազման նպատակով»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

ՀՀ առողջապահության նախարարի 10.01.2025թ.-ի թիվ 134-Ա հրամանով հաստատվել է «ՄԻԱՎ վարակ. Ժամանակակից մոտեցումներ» թեմայով 5-օրյա կրեդիտավորված դասընթացը, որի հիման վրա տարբեր բժշկական կենտրոններում կազմակերպվել են մասնագետների վերապատրաստումները: Վանաձորի բժշկական կենտրոնում բուժաշխատողների համար կազմակերված «ՄԻԱՎ-ի կանխարգելման, հայտնաբերման և բուժման հիմունքները» թեմայով կրեդիտավորված դասընթացի շրջանակում արծարծվել է նաև ՄԻԱՎ-ով ապրող, այդ թվում նաև կանանց նկատմամբ խարանի և խտրականության վերաբերյալ թեման, որին մասնակցել է 52 բուժաշխատող: Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ներառյալ՝ խարանի և խտրականության, մասնավորապես, ՄԻԱՎ-ով ապրող կանանց նկատմամբ առկա խտրականության վերաբերյալ 2025 թվականին կազմակերպվել է 5 դասընթաց, որին մասնակցել է 178 բուժաշխատող:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ընդլայնել ՄԻԱՎ-ի թեմայով դասընթացների շրջանակը՝ ավելացնել բժշկական կենտրոնների և նշյալ թեմայի վերաբերյալ դասընթացներին մասնակցող բուժաշխատողների թիվը:

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 5. Գենդերային բռնության և խտրականության կանխարգելում ու հաղթահարում, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանություն և աջակցություն

Սույն գերակայության բոլոր ջանքերն ուղղված են ավելի ապահով և անվտանգ միջավայր և հասարակություն ստեղծելուն բոլոր կանանց և աղջիկների համար, ինչպես նաև կանխելուն ցանկացած տեսակի բռնություն և աջակցելուն որևէ տեսակի բռնության ենթարկված անձանց, մասնավորապես՝ կանանց և աղջիկներին, ինչպես նաև պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության հաղթահարմանը:

2025 թվականին նախատեսված բոլոր **10** միջոցառումները ներառում են 2025-2028թթ. ժամանակաշրջանը՝ ենթադրելով կատարման պարբերական բնույթ:

2025 թվականի համար նախատեսված միջոցառումներն են՝

- ✓ «Իրականացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ՝ թիրախավորելով կոնվենցիայի վերաբերյալ առկա տարընկալումներն ու ապատեղեկատվությունը»,

- ✓ «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման էլեկտրոնային շտեմարանի անխափան գործունեության ապահովում և համապարփակ վիճակագրության վարում»,

- ✓ «Ընտանեկան և կենցաղային բռնության բարդ դեպքերի օպերատիվ արձագանքման նպատակով աշխատանքային մասնագիտական խմբի ստեղծում և գործունեության ապահովում»,

- ✓ «Պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող կառուցների մասնագետների, մասնավորապես սոցիալական աշխատողների և ոստիկանների կարողությունների զարգացման նպատակով ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի

կանխարգելման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, պաշտպանության և աջակցության տրամադրման և հարակից այլ թեմաների շրջանակում շարունակական վերապատրաստումների իրականացում՝ հաստատված մոդուլների հիման վրա»,

- ✓ «ԱՀԿ ուղեցույցների հիման վրա վերապատրաստման դասընթացների և ուսումնական ձեռնարկի մշակում՝ առողջապահական ծառայություններ մատուցողների համար, որը կօգտագործվի վերջիններիս պարտադիր վերապատրաստումների ընթացքում»,

- ✓ «Ուսուցիչների վերապատրաստումների ծրագրում և չափորոշչում գենդերային բաղադրիչի շրջանակում վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում նաև ընտանեկան և կենցաղային բռնության, գենդերային բռնության կանխարգելման թեմաների ներառմամբ»,

- ✓ «Հանրակրթական դպրոցներում աշակերտների շրջանում ընտանեկան և կենցաղային բռնության թեմաներով իրազեկման արշավների իրականացում»,

- ✓ «Քննիչների, դատավորների և դատախազների համար ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ պարտադիր, համալիր, շարունակական և զարգացող վերապատրաստումների իրականացում»,

- ✓ «Քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների կարողությունների զարգացում՝ ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ և ընտանեկան և կենցաղային բռնության թեմաների ներառում նրանց վերապատրաստման ծրագրերում»,

- ✓ «911 ծառայությունը սպասարկող անձնակազմի վերապատրաստում՝ ընտանեկան և կենցաղային բռնության թեմայի վերաբերյալ»:

**Գերակայություն 5.2 «Իրականացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ՝ թիրախավորելով կոնվենցիայի վերաբերյալ առկա տարընկալումներն ու ապատեղեկատվությունը»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է ՀՀ արդարադատության և ՀՀ արտաքին գործերի նախարարությունների հետ համատեղ։

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան ներառված է եղել 2025 թվականի ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի շրջանակում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Եվրոպայի Խորհրդի երևանյան գրասենյակի համագործակցությամբ կազմակերպված ոլորտում գործունեություն ծավալող մասնագետների կարողությունների զարգացման ծրագրերում։ Իրականացված աշխատանքները ներառում են՝

- կանանց նկատմամբ տեխնոլոգիաների միջոցով իրականացվող բռնության վերաբերյալ վերապատրաստում, որին մասնակցել է 31 մասնագետ պետական մարմիններից, լրատվամիջոցներից, իրավապահ մարմիններից և քաղաքացիական հասարակության կազմակերպություններից,

- երեք աշխատաժողով Հայաստանում առաջին անգամ իրականացվող «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի» վերաբերյալ, որին մասնակցել է 87 մասնագետ պետական մարմիններից և քաղաքացիական հասարակության կազմակերպություններից, միջազգային փորձագետի կողմից մանրամասնորեն ներկայացվել է ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի շրջանակում գործող միջազգային իրավական շրջանակը, կանխարգելման մեխանիզմները, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ու ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց հետ աշխատելու առանձնահատկություններն ու հատուկ միջոցները՝ համահունչ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 16-րդ հոդվածին,

- ուսումնական այց Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, որտեղ 13 մասնակիցներ պետական մարմիններից և քաղաքացիական հասարակական կազմակերպություններից, ծանոթացել են ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց համար իրականցվող ծրագրերին, ընտանեկան և

կենցաղային բռնության ենթարկված անձանց համար նախատեսված աջակցության ծրագրերին, բռնության դեպքերի կանխարգելման և արագ արձագանքման ու միջգերատեսչական համագործակցության առանձնահատկություններին, սույն ծրագրերի իրականացման համար Եվրոպայի Խորհրդի կողմից սահմանված չափորոշիչներին:

Վերոնշյալ բոլոր միջոցառումների ընթացքում անդրադարձ է կատարվել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի դրույթներին՝ վեր հանելով և հասցեագրելով Կոնվենցիայի վերաբերյալ առկա տարընկալումներն ու ապատեղեկատվությունը, ինչպես նաև առավել մանրամասն ներկայացնելով Կոնվենցիայի հիմնական նպատակն ու խնդիրները: ՀՀ արտաքին գործերի նախարարությունն իր հերթին ապահովում է Հայաստանի ակտիվ երկխոսությունը միջազգային գործընկերների հետ գենդերային հավասարության, կանանց իրավունքների պաշտպանության և կանանց նկատմամբ բռնության կանխարգելման ոլորտում, ներառյալ բարձր մակարդակի հանդիպումները, բազմակողմ հարթակներում ելույթներն ու թեմատիկ քննարկումները: Որպես Հայաստանի՝ Մարդու իրավունքների ոլորտում միջազգային հաշվետվողականության ամրապնդման և դրանից բխող հետագա քայլերի ապահովման Ազգային մեխանիզմի համակարգող՝ Նախարարությունն ապահովում է Հայաստանի շարունակական ներգրավվածությունն ու համագործակցությունը մարդու իրավունքների ոլորտում միջազգային կառույցների հետ, այդ թվում՝ ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների, Համընդհանուր պարբերական վերանայման գործընթացի շրջանակներում և Եվրոպայի խորհրդի մոնիտորինգային մեխանիզմների հետ: Նախապատրաստվում և համապատասխան միջազգային կառույցներին են ներկայացվում Հայաստանի Հանրապետության ազգային պարբերական զեկույցներն ու միջանկյալ հարցաշարերը, որոնք նպաստում են խտրականության վերացման և կանանց նկատմամբ բռնության կանխարգելման ոլորտներում Հայաստանի կողմից ձեռնարկվող միջոցների վերաբերյալ իրազեկման բարձրացմանը: 2025 թվականի դեկտեմբերին գործարկվել է Ազգային մեխանիզմի թվային հարթակը, որը ներկայացնում է Հայաստանին ուղղված հանձնարարականների և դրանց կատարման ամբողջական պատկերը (ai-nemra.am):

**Ամփոփում.** միջոցառումը կատարված է:

**Առաջարկ.** 2026 թվականին ավելացնել «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին»

Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վերաբերյալ հանրային իրազեկման արշավների և արշավների մասնակիցների թիվը:

### Գերակայություն 5.3 «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման էլեկտրոնային շտեմարանի անխափան գործունեության ապահովում և համապարփակ վիճակագրության վարում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն է:

2025 թվականի հունվարի 1-ից ամբողջական գործարկման է դրվել «Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման համակարգը» (այսուհետ՝ Համակարգ): Համակարգում տվյալները հավաքագրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հայտարարված դրամաշնորհային մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց տրամադրում են աջակցման կենտրոնի և ապաստարանի ծառայություններ, ՀՀ ՆԳՆ Ոստիկանությունից, ՀՀ քննչական կոմիտեից և ՀՀ դատական դեպարտամենտից: 2025 թվականին Համակարգ է մուտքագրվել 2905 թերթիկ, Համակարգում գրանցվել է 282 օգտահաշիվ, որից 205-ը ակտիվ են:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակվել է Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի վերաբերյալ 2025 թվականի տարեկան հաշվետվությունը:

**Ամփոփում.** միջոցառումը կատարված է:

**Առաջարկ.** 2026 թվականին Համակարգում ներդնել Հաշվետվությունների ինքնաշխատ մշակման մեխանիզմ, ներկայացնել համապարփակ հաշվետվություններ՝ ըստ յուրքանչյուր մարմնի գործառույթների:

### Գերակայություն 5.5 «Ընտանեկան և կենցաղային բռնության բարդ դեպքերի օպերատիվ արձագանքման նպատակով աշխատանքային մասնագիտական խմբի ստեղծում և գործունեության ապահովում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ ներքին գործերի նախարարությունն է:

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ոլորտում պետական լիազորված մարմինների և հասարակական կազմակերպությունների արդյունավետ համագործակցության և մշտական

հաղորդակցության ապահովման, ինչպես նաև ոլորտի հիմախնդիրների արդյունավետ լուծման նպատակով ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը մշակել և ՀՀ ՆԳ նախարարի կողմից հաստատել է Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերին օպերատիվ արձագանքի խթանման միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին թիվ 247-Ա հրամանը: 2025 թվականին միջգերատեսչական աշխատանքային խումբն ունեցել է երկու հանդիպում:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ապահովել միջգերատեսչական աշխատանքային խմբի կանոնավոր հանդիպումների անկցացումը:

**Գերակայություն 5.6 «Պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, բնակչության հետ անմիջական կապի մեջ գտնվող կառուցների մասնագետների, մասնավորապես սոցիալական աշխատողների և ոստիկանների կարողությունների զարգացման նպատակով ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կանխարգելման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, պաշտպանության և աջակցության տրամադրման և հարակից այլ թեմաների շրջանակում շարունակական վերապատրաստումների իրականացում՝ հաստատված մոդուլների հիման վրա»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ ներքին գործերի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններն են:

2025 թվականին ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի շրջանակում ընտանեկան և կենցաղային բռնության դրսևորումների, ներքին օրենսդրական կարգավորումների, արձագանքման ու ուղղորդման մեխանիզմների և հարակից այլ թեմաների վերաբերյալ վերապատրաստման և իրազեկման միջոցառումները կրել են շարունակական բնույթ՝ իրականացվելով ազգային, մարզային և համայնքային մակարդակներում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տեղական և միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ իրականացված իրազեկման և վերապատրաստման միջոցառումներին անդրադարձ է կատարվել Գերակայություն 1.7 և Գերակայություն 5.2 կետերում, սակայն կարևոր է ներկայացնել նաև Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում գործող աջակցության կենտրոնների կողմից իրականացված աշխատանքները, որոնք ներառում են ինչպես իրազեկման, այնպես էլ վերապատրաստման բաղադրիչներ՝ նպաստելով հատկապես համայնքային

մակարդակում հանրության իրազեկվածության բարձրացմանն ու ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելմանն ու բացահայտմանը՝

- «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպությունը Երևանում 26 մասնագետի համար անցկացրել է երկօրյա վերապատրաստման աշխատաժողով՝ նվիրված ընտանեկան բռնության խորհրդատվությանը և ճգնաժամային միջամտությունների իրականացմանը «Աջակցություն կանանց զորացմանն ու տնտեսական անկախացմանը» ծրագրի («ՀԱՎԱՍԱՐ – ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի շրջանակում ՕքսԵՋԵն հիմնադրամի ենթադրամաշնորհային ծրագիր) շրջանակում կազմակերպությունը իրականացրել է կանանց նկատմամբ բռնության, մասնավորապես՝ ընտանեկան բռնության թեմայով իրազեկման բարձրացման երկօրյա դասընթացաշար, որին մասնակցել է 18 անձ, կազմակերպել են նաև կլոր-սեղան քննարկումներ ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի շրջանակում առկա նախաձեռնությունների, խնդիրների, հետազոտությունների, նախատեսվող փոփոխությունների և այլ հարակից թեմաների վերաբերյալ՝ ներառելով 80 անձի պետական և հասարակական կազմակերպություններից, իսկ իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումները ներգրավվել են 80 անձի,
- «Թալին հույս» սոցիալական հասարակական կազմակերպությունը Արագածոտնի մարզի 30 համայնքներում իրականացրել է իրազեկում ընտանեկան և կենցաղային բռնության օրենսդրական կարգավորումների, մարդու իրավունքների, գենդերային հավասարության, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց մատուցվող անվճար ծառայությունների մասին, որոնց մասնակցել է 426 անձ, 22 մասնագետների համար իրականացվել է երկօրյա վերապատրաստման դասընթաց «Աջակցման կենտրոնները հանուն գենդերազգայուն մոտեցման» ծրագրի շրջանակներում, 49 մասնագետների համար իրականացվել է մեկօրյա վերապատրաստման դասընթաց «Գենդերային հավասարություն և կանանց հզորացումը Աշտարակ, Ապարան և Ծաղկահովիտ համայնքներում» ծրագրի շրջանակներում,
- «Կանանց իրավունքների տուն» հասարակական կազմակերպությունը իրականացրել է իրազեկման միջոցառումներ Շիրակի մարզի գյուղական և քաղաքային բնակավայրերում՝ 480 անձանց շրջանում, որոնց 5%-ը եղել են Ղարաբաղից տեղահանված անձինք,

- «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպությունը իրականացրել է իրազեկման միջոցառումներ Գեղարքունիքի մարզի տարբեր համայքներում՝ ներառելով 400 անձի,
- «Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Աջակցման կենտրոնները հանուն գենդերազգայուն մոտեցման» ծրագրի շրջանակում Կոտայքի մարզի տարբեր համայնքներում իրականացրել է իրազեկման միջոցառումներ՝ ներառելով 232 անձի, իրականացվել է նաև «Ձայներ ընդդեմ բռնության» ծրագիրը, որի նպատակն է եղել գենդերային անհավասարության, գենդերային խտրականության և բռնության վերաբերյալ իրազեկման բարձրացման միջոցով զորեղացնել երիտասարդներին՝ մասնկացել են 109 երիտասարդներ Կոտայքի մարզի տարբեր բնակավայրերից, «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ Երևանում և Շիրակի մարզում կազմակերպվել են նաև եռօրյա դասընթացներ,
- «Սոսե» կանանց հիմնահարցեր հասարակական կազմակերպությունը Սյունիքի մարզում իրականացրել է իրազեկման տարբեր միջոցառումներ՝ ներառելով 550 անձի.
- «Հանուն Իրավահավասարության» հասարակական կազմակերպության կողմից Տավուշի մարզի Իջևան, Դիլիջան և Նոյեմբերյան համայնքներում իրականացված իրազեկման միջոցառումներին մասնակցել է 300 անձ, որոնցից 70-ը եղել են տեղահանված կանայք,
- «Ընտանիք առանց բռնության» հասարակական կազմակերպության կողմից Լոռու մարզի Սպիտակ, Ալավերդի, Վանաձոր, Ազնվաձոր, և Փամբակ համայնքներում իրականացված իրազեկման միջոցառումների մասնակցել է 215 անձ,
- «Դու մենակ չես» կանանց աջակցման հասարակական կազմակերպության կողմից Վայոց ձորի մարզում ընտանեկան և կենցաղային բռնության, գենդերային հավասարության և հարակից թեմաների վերաբերյալ իրականացված միջոցառումներին մասնակցել է 688 անձ, Արարատի մարզում՝ 540 անձ, «Աջակցման կենտրոնները հանուն գենդերազգայուն մոտեցման» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում կազմակերպվել է երկօրյա վերապատրաստման դասընթաց ընտանեկան բռնության, բռնության շղթայի, ինչպես նաև ընտանեկան բռնության զոհերի հետ աշխատանքային էթիկայի վերաբերյալ 20 մասնագետի համար,

- «Երիտասարդական Ավանգարդ» հասարակական կազմակերպությունը իրականացրել է 25 մասնագետի երկօրյա վերապատրաստում «Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքում գենդերազգայուն և զոհակենտրոն մոտեցման ցուցաբերում» թեմայով, իրականացվել են իրազեկման հանդիպումներ 135 ուսանողի մասնակցությամբ, կազմակերպության կողմից պարբերաբար իրականացված իրազեկման արշավներին մասնակցել է 263 անձ:

<u>ՀՀ ՆԳՆ ոստիկանություն</u>. Ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ թեմաներն ընդգրկված են ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում կազմակերպվող վերապատրաստման դասընթացների առարկայական թեմատիկ պլաններում: 2025 թվականին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում Ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով վերապատրաստվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության 1520 և պարեկային ծառայության 400 ծառայող: Կարևոր է նշել նաև, որ 2025 թվականի հուլիսի 9-ին ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանով հաստատվել է «Բռնության ենթարկված երեխաների հետ հաղորդակցության վերաբերյալ» մեթոդական ուղեցույցը, որով սահմանվել են երեխայի նկատմամբ կատարված բռնության դեպքերին արձագանքելու գործընթացում ոստիկանության ծառայողների հաղորդակցության հմտությունների առանձնահատկությունները:

<u>ՀՀ քննչական կոմիտե</u>. 2025 թվականին անցկացվող քննիչների վերապատրաստման ծրագրում ընդգրկվել է «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելումը ու դրա դեմ պայքարը» թեման, որի շրջանակում վերապատրաստվել են 129 քննիչներ:

<u>ՀՀ գլխավոր դատախազություն.</u> 2025 թվականի ապրիլի 26-27-ը շուրջ 50 դատախազներ մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում Նիդերլանդների Թագավարության դեսպանության աջակցությամբ կազմակերպված՝ «Ընտանեկան բռնության կանխարգելում, քրեական հետապնդում և դատաիրավական արձագանքի արդիական ուղղություններ» թեմայով երկօրյա վերապատարստմանը: ՀՀ դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության կողմից 2025 թվականին ընտանեկան և կենցաղային բռնության թեմայով վերապատրաստվել է շուրջ 60 դատախազ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին շարունակել ընտանեկան և կենցաղային բռնության թեմայի վերաբերյալ իրազեկման և վերապատրաստման միջոցառումները՝ աշխատելով իրազեկման արշավների պլանների մշակման և վերապատրաստման մոդուլների վերանայման և թվայնացման ուղղությամբ:

### Գերակայություն 5.7 «ԱՀԿ ուղեցույցերի հիման վրա վերապատրաստման դասընթացների և ուսումնական ձեռնարկի մշակում՝ առողջապահական ծառայություններ մատուցողների համար, որը կօգտագործվի վերջիններիս պարտադիր վերապատրաստումների ընթացքում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

Միջոցառման կատարման վերաբերյալ, այդ թվում նաև՝ ակնկալվող արդյունքի և արդյունքային ցուցանիշների ներառմամբ տեղեկատվությունը ներկայացվել է Գերակայություն 4-ի՝ 2, 3, 4 և 12 կետերում:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականի համար անհրաժեշտ է հաշվի առնել Գերակայություն 4-ի՝ 2, 3, 4 և 12 կետերում ներկայացված առաջարկները:

### Գերակայություն 5.8 «Ուսուցիչների վերապատրաստումների ծրագրում և չափորոշչում գենդերային բաղադրիչի շրջանակում վերապատրաստումների իրականացում՝ այդ թվում նաև ընտանեկան և կենցաղային բռնության, գենդերային բռնության կանխարգելման թեմաների ներառմամբ»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում «Բուլինգի դրսևորումներն ուսումնական հաստատություններում և դրանց կանխարգելման ուղիները» և «Գենդերային բաղադրիչի ներառումը ուսուցիչների՝ ներառող դասավանդման կարողությունների շարունակական զարգացման համատեքստի մեջ» թեմաներով 2025 թվականին հանրապետության 122 դպրոցներում շարունակական վերապատրաստումներ և մենթորական աջակցություն են ստացել 2124 մանկավարժներ:

2025 թվականին մշակվել է նաև «Գենդերային կարծրատիպերի հաղթահարումը ապահով և անվտանգ կրթական միջավայրի ստեղծման համատեքստում. գենդեր և հույզ» ձեռնարկը: Ձեռնարկի նպատակն է մանկավարժներին տրամադրել գործիքներ, մեթոդներ և գիտելիքներ, որոնք

կօգնեն կրթական գործընթացում խթանել գենդերային հավասարությունը՝ նպաստելով ուսուցիչների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, հարգանքի, արդարության և ներառականության մշակույթի զարգացմանը: Ձեռնարկի հիման վրա իրականացվել են դասընթացներ նաև ծնողների համար (100 մասնակից):

2025 թվականին «Ապահով և անվտանգ դպրոց» նախաձեռնության շրջանակում «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված կրթական միջավայրում անվտանգության երաշխավորման և բռնության կանխարգելման մշակույթի զարգացմանը: Դասընթացներն իրականացվել են «Դպրոցում երեխաների պաշտպանության և անվտանգության ուղեցույցի» հիման վրա մշակված մոդուլներով:

**Վերապատրաստումները իրականացվել են մի քանի հաջորդական փուլերով.**

**I փուլ՝** դասընթացավարների վերապատրաստում. հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվել է «Ապահով և անվտանգ կրթական միջավայր» թեմայով դասընթացավարների վերապատրաստման 8 դասընթաց, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցություն 24 կենտրոնների (ՏՄԱԿ) 145 մասնագետների համար:

**II փուլ.** դպրոցների կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգողների (ԿԴԱՀ) և հոգեբանների վերապատրաստում. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից վերապատրաստված ՏՄԱԿ-ների մասնագետները նույն թեմայով իրենց տարածաշրջաններում կազմակերպել և իրականացրել է 118 վերապատրաստման դասընթաց: Այս փուլում վերապատրաստումներն ընդգրկել են 1368 ուսումնական հաստատությունների 987 հոգեբան, 1408 փոխտնօրեն: Վերապատրաստումները նպատակ են ունեցել զարգացնել մանկավարժների և մասնագետների հմտությունները դպրոցներում ապահով, հոգեբանական և սոցիալական անվտանգության միջավայր ձևավորելու ուղղությամբ:

**III փուլ.** ուսուցիչների վերապատրաստում. վերապատրաստում անցած մասնագետներն իրենց հաստատություններում կազմակերպել են ուսուցիչների համար նախատեսված վերապատրաստումներ և իրազեկման հանդիպումներ:

Այս փուլում շեշտադրվել են բռնության և բուլինգի կանխարգելման մեխանիզմները, երեխայի հուզական բարեկեցության ապահովման

մոտեցումները և դպրոցի հոգեբանական անվտանգության մշակույթի ձևավորումը: Վերապատրաստումներին մասնակցել են 14 579 ուսուցիչ:

**IV փուլ.** ծնողների իրազեկում. վերապատրաստում անցած ուսուցիչները կազմակերպել են ծնողների իրազեկման հանդիպումներ: Արդյունքում վերապատրաստումներին մասնակցել է ընդհանուր առմամբ՝ 11 256 ծնող:

Այս փուլում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել հետևյալ թեմաներին.

- երեխայի վարքային և հուզական արձագանքների ճանաչում, դրական հաղորդակցման ձևերի զարգացում, բռնության, բուլինգի և կիբերբուլինգի կանխարգելում՝ ծնողների իրազեկում վտանգավոր վարքագծերի, առցանց ռիսկերի և համապատասխան արձագանքման մեխանիզմների մասին, դպրոց-ընտանիք համագործակցության ամրապնդում՝ փոխադարձ վստահության և համագործակցային մշակույթի ձևավորում կրթական միջավայրում:

- Գենդերային հավասարության թեմաների վերաբերյալ իրականացված վերապատրաստումներին անդրադարձ է կատարվել Գերակայություն 3.4 կետում:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին շարունակել ընտանեկան և կենցաղային բռնության, գենդերային հավսարության թեմաների վերաբերյալ վերապատրաստման միջոցառումները՝ հիմված մշակված և հաստատված մոդուլների վրա:

### Գերակայություն 5.9 «Հանրակրթական դպրոցներում աշակերտների շրջանում ընտանեկան և կենցաղային բռնության թեմաներով իրազեկման արշավների իրականացում»

Միջոցառման կատարման համար պատասխանատու են ՀՀ ՆԳՆ ոստիկանությունը և ՀՀ քննչական կոմիտեն: 2025-2026 ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ հանրապետության ուսումնական հաստատություններում աշակերտների, մանկավարժական անձկազմի և ծնողների մասնակցությամբ կազմակերպվել և իրականացվել է «Դասը վարում է ոստիկանը» իրազեկող և բացատրական բնույթ կրող միջոցառումը, որի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ընտանեկան և

կենցաղային բռնության թեմային՝ ներկայացվել են ընտանեկան և կենցաղային բռնության հիմական դրսևորումները, պարզաբանվել են բռնության զոհ դառնալու դեպքերը և հետևանքները, կանխարգելման և արձագանքման մեխանիզմները: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 29.03.2023թ. N 91-Լ հրամանի համաձայն՝ «Դասը վարում է քննիչը» խորագրով ծրագրի շրջանակում ՀՀ քննչական կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձինք կարող են դասավանդել Հայաստանի Հանրապետությունում գործող հանրակրթական միջին (8-9-րդ դասարան) և ավագ (10-12 դասարան) ուսումնական հաստատություններում: «Դասը վարում է քննիչը» խորագրով ծրագրի շրջանակում 2025 թվականին անցկացվել է 7 դասաժամ, որի շրջանակում կազմակերպվել են նաև «Ընտանեկան բռնություն» թեմայով դասընթացներ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է մասամբ:

Առաջարկ. 2026 թվականին ապահովել «Դասը վարում է ոստիկանը» և «Դասը վարում է քննիչը» կրթական ծրագրերի շրջանակում տարեկան առնվազն 20 հանդիպման անկացումը:

### Գերակայություն 5.10 «Քննիչների, դատավորների և դատախազների համար ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ պարտադիր, համալիր, շարունակական և զարգացող վերապատրաստումների իրականացում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարությունն է:

2025 թվականի ընթացքում Արդարադատության ակադեմիայի կողմից իրականացվել է «Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրա դեմ պայքարը» վերտառությամբ դասընթացը, որի շրջանակում վերապատրաստվել է **73** դատավոր և դատավորի թեկնածու՝ 6 ակադեմիական ժամ, 52 դատախազ՝ 6 ակադեմիական ժամ, 76 քննիչ՝ 2 ակադեմիական ժամ:

Քննիչների վերապատրաստումներին անդրադարձ է կատարվել նաև Գերակայություն 5.6 կետում:

Ամփոփում. Միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին մեծացնել ընտանեկան և կենցաղային բռնության թեմայի վերաբերյալ վերապատրաստվող դատավորների, դատավորի թեկանծուների, դատախազների և քննիչների թիվը:

### Գերակայություն 5.11 «Քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների կարողությունների զարգացում՝ ընտանեկան և կենցաղային բռնության

**վերաբերյալ և ընտանեկան և կենցաղային բռնության թեմաների ներառում նրանց վերապատրաստման ծրագրերում»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարությունն է:

ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող «ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող Երեխաների խորհրդի հարթակի ընդլայնում և ինստիտուցիոնալ զարգացում, օրենքին առնչվող երեխաների համար ծառայությունների մատուցում և ավելի լավ միջավայրի ապահովում, Երեխաների հետ աշխատող մասնագետների գիտելիքների տրամադրում, կարողությունների և հմտությունների զարգացման ապահովում, Բարնահուս մոդելի ինստիտուցիոնալ զարգացում և երեխաների շրջանում պաշտպանությանն ուղղված իրազեկում» ծրագրի՝ «Քրեակատարողական հիմարկների և պրոբացիայի ծառայության աշխատակիցների և հանցագործություն կատարած անձանց կարողությունների զարգացում» ենթածրագրի շրջանակում 2025 թվականի հունվար-մարտ ամիսներին մշակվել է «Ծնողավարությունը բռնության կանխարգելման համատեքստում» մասնագիտական ձեռնարկը՝ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների համար: Իրականացվել են ընտանեկան և կենցաղային բռնության վերաբերյալ թեմաներով վերապատրաստումներ ԱՆ քրեակատարողական հիմարկների, պրոբացիայի ծառայության, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի 32 մասնագետների համար, արդյունքում վերապատրաստված մասնագետների կողմից իրականացվել են դասընթացներ՝ ազատազրկման ձևով պատիժ կրող **92** դատապարտյալների և պրոբացիայի շահառուների հետ:

Գենդերային հավասարության թեմայով կարողությունների զարգացման նպատակով 2025 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կայացել է երկօրյա դասընթաց՝ նվիրված գենդերազգայուն մոտեցումների ամրապնդմանը, խտրականության արգելքին և ատելության խոսքի դեմ պայքարին, մասնակցել է քրեակատարողական և պրոբացիայի 77 ծառայող:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ավելացնել ընտանեկան և կենցաղային բռնության թեմայի վերաբերյալ վերապատրաստումների և մասնակիցների թիվտ՝ ներկայացնելով կատարված աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ և սեռով տարանջատված տվյալներ:

### Գերակայություն 5.13 «911 ծառությունը սպասարկող անձնակազմի վերապատրաստում՝ ընտանեկան և կենցաղային բռնության թեմայի վերաբերյալ»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ ներքին գործերի նախարարությունն է:

2026 թվականին նախատեսվում է գործարկել ՆԳՆ Օպերատիվ կառավարման համակարգի նոր մոդուլ՝ «Զանգերի կառավարման միասնական կենտրոն», որը կմիավորի Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնը (1-02) և Փրկարար ծառայության Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնը (9-11): Կառուցվածքային այս փոփոխություններից հետո կիրականացվեն նաև Ընտանեկան և կենցաղային բռնություն թեմայով վերապատրաստումներ:

Ամփոփում. Միջոցառումը կատարված չէ:

Առաջարկ. 2026 թվականին կազմակերպվել վերապատրաստումներ ընտանեկան և կենցաղային բռնություն թեմայով 911 ծառությունը սպասարկող անձնակազմի համար՝ ըստ Ռազմավարությամբ նշյալ միջոցառման կատարման համար նախատեսված ակնկալվող արդյունքի և արդյունքային ցուցանիշների:

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 6. Կլիմայի փոփոխության նկատմամբ գենդերազգայուն և գենդեր-արձագանքող մոտեցումների ձևավորում, ներառական սկզբունքների ապահովում և իրազեկվածության բարձրացում

Սույն գերակայության շրջանակում բոլոր ջանքերն ուղղված են կլիմայի ազդեցության մեղմանն ուղղված միջոցառումներում գենդերազգայուն և գենդեր-արձագանքող մոտեցումների ձևավորմանն ու ինտեգրմանը, կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրների վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացմանը:

2025 թվականին նախատեսված **6** միջոցառումներից **5-ը** ներառում են 2025-2028թթ. ժամանակաշրջանը՝ ենթադրելով կատարման պարբերական բնույթ:

**2025 թվականի համար նախատեսված միջոցառումներն են՝**

- ✓ «Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած գենդերային խնդիրների թեմատիկ ուսումնասիրությունների իրականացում դրա ազդեցությունը առավելապես կրող ոլորտներում, կլիմայի փոփոխությանն առնչվող գենդերային ցուցանիշների սահմանում, դրանց հավաքագրման մեթոդաբանության մշակում և տվյալների ամփոփում»,

- ✓ «Կլիմայի փոփոխությանն առնչվող գենդերային ցուցանիշների սահմանում, դրանց հավաքագրման մեթոդաբանության մշակում և տվյալների ամփոփում»,

- ✓ «Կլիմայի փոփոխության, այդ թվում՝ գենդերային և սոցիալական ազդեցության վերաբերյալ թեմատիկ (այդ թվում՝ ըստ տնտեսության ոլորտների) դասընթացների նյութերի պատրաստում և ներառում հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերում»,

- ✓ «Էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի ոլորտներում մասնագիտական (այդ թվում՝ վերապատրաստման) ծրագրերին և աշխատանքներում կանանց մասնակցության խրախուսում և ընդգրկում»,

- ✓ «Կլիմայի փոփոխությանն առնչվող ոլորտներում, մեղմման և հարմարվողականության ծրագրերում միջգերատեսչական

հանձնաժողովներում, մարզային և համայնքային մակարդակներում կանանց մասնակցության խրախուսում, ինչպես նաև կլիմայի փոփոխության գենդերային և սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ սոցիալական գովազդների մշակում և հանրայնացում»,

- ✓ «Հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցության և գենդերային առանձնահատկությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում»:

**Գերակայություն 6.1 «Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացած գենդերային խնդիրների թեմատիկ ուսումնասիրությունների իրականացում դրա ազդեցությունը առավելապես կրող ոլորտներում, կլիմայի փոփոխությանն առնչվող գենդերային ցուցանիշների սահմանում, դրանց հավաքագրման մեթոդաբանության մշակում և տվյալների ամփոփում»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն է:

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը գործընկեր միջազգային կազմակերպությունների աջակցությամբ պարբերաբար իրականացվում է հետազոտություններ և ուսումնասիրություններ՝ կլիմայի փոփոխության ազդեցության գենդերային վերլուծության և բնակչության տարբեր խմբերի, այդ թվում կանանց վրա դրա ազդեցության գնահատման վերաբերյալ:

2025 թվականին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակը» «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագրի շրջանակում իրականացնում է հարցում Երևանում և ՀՀ մարզերում (3000 անձ) գնահատելու համար բնակչության տարբեր խմբերի, այդ թվում նաև կանանց տեղեկացվածությունը կլիմայի փոփոխության հետ կապված հարցերի վերաբերյալ. արդյունքները հասանելի կլինեն մինչև 2026 թվականի ավարտը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ համատեղ մշակել և պարբերաբար հրապարակում է գենդեր-տարանջատված տվյալներ շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառներում որոշում կայացնողների վերաբերյալ: Տվյալները ներկայացված են «Հայաստանի կանայք և տղամարդիկ 2024» հրապարակման մեջ:

2025 թվականին մշակվել և հանրայնացվել է նաև Թափանցիկության երկամյա զեկույցներում և ազգային հաղորդագրություններում գենդերային պահանջների ապահովման ուղեցույցը:

Կատարվել է ուսումնասիրություն Հայաստանում կլիմայի փոփոխության հետ կապված գենդերային և սոցիալական խոցելիության վերաբերյալ, որը ներկայացվել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպայի վիճակագիրների համաժողովում: Վերլուծվել են 2024 թվականի հոկտեմբեր-նոյեմբերին անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքում հավաքագրված որակական և քանակական տվյալները, բացահայտվել են Ծրագրի շահառուների սոցիալական խոցելիության կարգավիճակը, էներգաարդյունավետության վերազինման տնտեսական և սոցիալական ազդեցությունը կանանց և տղամարդկանց գլխավորությամբ տնային տնտեսությունների վրա, ինչպես նաև սոցիալապես գնահատվել են անապահով ընտանիքները: Հետազոտությունում ընդգրկվել է 171 տնային տնտեսություն, որոնք բնակվում էին Գյումրի, Դիլիջան և Ստեփանավան քաղաքների 10 ամբողջությամբ էներգաարդյունավետ վերազինված շենքերում:

Փարիզյան համաձայնագրի ներքո սահմանված ազգային հանձնառություններում (ԱՍՀ 3.0) գենդերազգայուն և սոցիալապես ներառական մոտեցումների արդյունավետ ներառման նպատակով ՄԱԶԾ «Կլիմայական խոստում Հայաստան. խոստումից ազդեցություն» ծրագրի շրջանակում «Կանայք կլիմայում և էներգետիկայում» ՀԿ-ն մասնագիտական թիմի ներգրավմամբ իրականացրել է խորքային ուսումնասիրություն, որի արդյունքները ներկայացվել են մի շարք ոլորտային քննարկումների ընթացքում: Ուսումնասիրության «Բարելավելով ԱՍՀ 3.0 գենդերազգայուն և սոցիալապես ներառական չափանիշները» բաժնի հիմնական շեշտադրումը այն է, որ կլիմայի փոփոխության ազդեցությունները անհամաչափ ծանր են կրում հատկապես կանայք, երիտասարդները և խոցելի խմբերը, ինչը սահմանափակում է նրանց դիմակայունությունն ու ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացներում: Հետևաբար, գենդերազգայուն և ներառական քաղաքականության ապահովումը ոչ միայն արդարության, այլ նաև կլիմայական քաղաքականության արդյունավետության երաշխավորման կարևոր նախապայման է: Սրանով էլ ձևավորվել են ոլորտային թիրախների մշակման սկզբունքները: Կատարված աշխատանքների հիմնական նպատակն էր ստանալ ոլորտային դերակատարների հետադարձ կապը և համատեղ ձևավորել առավել մասնակցային և ներառական առաջարկներ ԱՍՀ 3.0-ի համար:

**Ամփոփում.** Միջոցառումը կատարված է:

**Առաջարկ.** 2026 թվականին կատարված ուսումնասիրությունների և հետազոտությունների հիման վրա՝ նախաձեռնել թիրախային միջոցառումներ կանանց նկատմամբ կլիմայի փոփոխության բացասական հետևանքների ազդեցության մեղման ուղղությամբ:

### Գերակայություն 6.2 «Կլիմայի փոփոխությանն առնչվող գենդերային ցուցանիշների սահմանում, դրանց հավաքագրման մեթոդաբանության մշակում և տվյալների ամփոփում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն է:

Նախարարությունը ՄԱԶԾ «Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման համար» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի շրջանակում մշակել է կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մոնիթորինգի համար անհրաժեշտ ցուցանիշների, այդ թվում՝ գենդեր-տարանջատված համակարգ, որի ներդրումը նախարարության համապատասխան վարչական ռեգիստրներում ընթացքի մեջ է:

**Ամփոփում.** Միջոցառումը կատարված է՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրերի մոնիթորինգի համար անհրաժեշտ ցուցանիշների, այդ թվում՝ գենդեր-տարանջատված համակարգը մշակված է:

**Առաջարկ.** 2026 թվականին համակարգը ինտեգրել վարչական տվյալների ռեգիստրներում կամ համապատասխան վիճակագրական հրապարակումներում:

### Գերակայություն 6.3 «Կլիմայի փոփոխության, այդ թվում՝ գենդերային և սոցիալական ազդեցության վերաբերյալ թեմատիկ (այդ թվում՝ ըստ տնտեսության ոլորտների) դասընթացների նյութերի պատրաստում և ներառում հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն է:

Նախարարությունը միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար իրականացնում է կլիմայի փոփոխության տարբեր թեմատիկ դասընթացներ, գիտաժողովներ, սեմինարներ: 2025 թվականին կազմակերպվել են ստորև ներկայցված միջոցառումները՝

- «Շրջակա միջավայրի և սոցիալական պաշտպանության սկզբունքները» դասընթաց 2025թ. հուլիսի 27-ին,

- «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացման սոցիալական և կլիմայական օգուտները համայնքի համար» թեմայով լրագրողական շրջայց դեպի Կապան և Քաջարան 2025թ. հուլիսի 18-19-ին,

- «Ասբեստի թափոնների անվտանգ կառավարման» թեմայով դասընթաց Ալավերդի համայնքում 2025թ. մայիսի 15-ին,

- «Համայնքային էներգետիկ կառավարման համակարգի ներդրման» թեմայով դասընթաց՝ համայնքային մասնագետների համար 2025թ. մայիսի 5-ին,

- «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի շրջանակում մշակվել են առաջարկություններ «Էներգաարդյունավետության բարելավման նախագծեր մշակելու համար տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների կարողությունների զարգացման» վերաբերյալ:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին ապահովել կլիմայի փոփոխության վերաբերյալ թեմատիկ դասընթացներում գենդերային և սոցիալական բաղադրիչի ինտեգրումը՝ դասընթացներում ներառել առանձին թեմաներ, վերանայել նախորդ տարի մշակված նյութերը կլիմայի փոփոխության գենդերային և սոցիալական ազդեցության համատեքստում, ներկայացնել դասընթացներին և վերապատրաստումներին մասնակցած հանրային ծառայողների թվի վերաբերյալ ամփոփ հաշվետվություններ:

### Գերակայություն 6.4 «Էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի ոլորտներում մասնագիտական (այդ թվում՝ վերապատրաստման) ծրագրերին և աշխատանքներում կանանց մասնակցության խրախուսում և ընդգրկում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է ՀՀ բարձր տեխնոլոգիական և արդյունաբերության նախարարության հետ համատեղ:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամում (այսուհետ՝ Հիմնադրամ) կանանց ղեկավարմամբ իրականացվում են թվով երեք ծրագրեր, ընդ որում Հիմնադրամում աշխատող բոլոր կանայք հիմնականում մասնակցում են որպես ծրագրեր իրականացնող անձնակազմի անդամներ: Հիմնադրամում ոլորտի մասնագիտական կրթություն ունի մեկ կին: Մի շարք ծրագրերում կան իրազեկման և կարողությունների զարգացման բաղադրիչներ, որոնք ուղղված են առավել զարգացնելու կանանց մասնագիտական հմտությունները էներգախնայողության և վերականգնվող էներգիայի ոլորտներում:

2025 թ. հոկտեմբերի 7-8-ին Երևանում անցկացվել է «Կանանց դերը համայնքների կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման գործում» խորագրով երկօրյա ուսուցողական աշխատաժողովը: Այն իրականացրել է «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» ծրագիրը՝ Հայաստանի համայնքների միության և «Կանայք կլիմայում և էներգետիկայում» հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Աշխատաժողովին մասնակցեցել են «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանն անդամակցող համայնքապետարանների 30 կին մասնագետները, որոնք տեղական ինքնակառավարման մարմիններում ներգրավված են որոշումներ կայացնելու գործընթացներում և/կամ պատասխանատու են ոլորտային որոշ գործողությունների կատարումն ապահովելու համար:

Ամփոփում. միջոցառումը կատարված է:

Առաջարկ. 2026 թվականին աշխատանքներ իրականացնել Էներգախնայողության և այլընտրանքային էներգիայի ոլորտներում կանանց և աղջիկների ղեկավարմամբ/առաջնորդությամբ, մասնակցությամբ իրականացվող ծրագրերի թվի ավելացնամ և դրանց վերաբերյալ համապարփակն հաշվետվությունների մշակման և ներկայացման ուղղություններով:

**Գերակայություն 6.5 «Կլիմայի փոփոխությանն առնչվող ոլորտներում, մեղմման և հարմարվողականության ծրագրերում միջգերատեսչական հանձնաժողովներում, մարզային և համայնքային մակարդակներում կանանց մասնակցության խրախուսում, ինչպես նաև կլիմայի փոփոխության գենդերային և սոցիալական առանձնահատկությունների վերաբերյալ սոցիալական գովազդների մշակում և հանրայնացում»**

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն է:

Վարչապետի 06.07.2021թ. N 719-Ա որոշմամբ հաստատվել է «ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների և դրույթների իրականացումը համակարգող միջգերատեսչական խորհուրդ», որի անդամների 53 տոկոսը կանայք են:

Խորհուրդին կից գործում են 3 մշտական աշխատախմբեր՝

- Կլիմայի փոփոխության և հարմարվողականության խումբ, որտեղ անդամների 77 %-ը կանայք են,
- Թափանցիկության խումբ, որտեղ 85 %-ը կանայք են,
- Ֆինանսավորման խումբ, որտեղ 86%-ը կանայք են:

Միցոցառմամբ սահմանված արդյունքային ցուցանիշներին անդրադարձ է կատարվել նաև Գերակայություն 6.4-ում:

Ամփոփում. Միջոցառումը կատարված է մասամբ՝ տարեկան անհրաժեշտ էր մշակել և ներկայացնել առնվազն 1 սոցիալական գովազդ կանանց նկատմամբ կլիմայի փոփոխության ազդեցության և դրա մեղման վերաբերյալ:

Առաջարկ. 2026 թվականին աշխատանքներ իրականացնել կլիմայի փոփոխությանն առնչվող ոլորտներում, մեղման և հարմարվողականության ծրագրերում կանանց մասնակցության խրախուսման ուղղությամբ, ներկայացնել տարեկան առնվազն մեկ սոցիալակն գովազդ, կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել համապարփակ հաշվետվություններ:

### Գերակայություն 6.6 «Հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցության և գենդերային առանձնահատկությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում»

Միջոցառման կատարման պատասխանատուն ՀՀ առողջապահության նախարարությունն է:

Կլիմայի փոփոխության բացասական ազդեցության և գենդերային առանձնահատկությունների վերաբերյալ իրականացված միջոցառումներին և

վերապատրաստման ծրագրերին անդրադարձ է կատարվել Գերակայություն 6-ի 1, 3 և 4 կետերում։

**Ամփոփում.** միջոցառումը կատարված չէ՝ 2025 թվականին հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցության և գենդերային առանձնահատկությունների վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումներ չեն իրականացվել։

**Առաջարկ.** 2026 թվականին ներկայացնել առնվազն 3 մեդիա հաղորդում հանրային առողջության վրա կլիմայի փոփոխության բացասական հետևանքների և գենդերային առանձնահատկությունների վերաբերյալ։

## Ամփոփում

ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025–2028 թվականների ռազմավարության միջոցառումների ծրագրով 2025 թվականի համար նախատեսված է եղել 43 միջոցառում: Միջոցառումների կատարման վերաբերյալ պատասխանատու մարմինների կողմից ներկայացված տվյալների ամփոփման և վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ դրանցից 37-ը կատարվել են, 4-ը՝ մասամբ կատարվել, իսկ 2 միջոցառում չեն կատարվել: Ռազմավարության կատարողականը գնահատվում է 86 տոկոս:

Միջոցառումների կատարման գնահատման ընթացքում հաշվի են առնվել միջոցառումների իրականացման բնույթը, առկա ելակետային տվյալները, ինչպես նաև միջոցառումների իրականացման համար սահմանված ժամկետները:

Միջոցառումների մեծ մասը կատարվել է տեղական և միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցությամբ:

Կատարված միջոցառումների զգալի մասը ապահովել է Ռազմավարությամբ սահմանված ակնկալվող արդյունքների և արդյունքային ցուցանիշների իրականացումը կամ դրանց հասնելու ուղղությամբ էական առաջընթաց:

**Զեկույցում ներկայացված տվյալների ամփոփման հիման վրա 2026 թվականի համար առաջարկվում է՝**

- ✓ մշակել և կիրառել թեմատիկ իրազեկման արշավների և միջոցառումների իրականացման պլան/գործողությունների ծրագիր,
- ✓ մշակել միասնական ձևաչափեր և մեթոդաբանություն՝ դասընթացների, իրազեկման արշավների և մասնագետների կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունների ներկայացման համար,
- ✓ ավարտին հասցնել 2025 թվականին մեկնարկած և Զեկույցում ներկայացված օրենսդրական փոփոխությունների մշակման աշխատանքները,
- ✓ ապահովել Ռազմավարությամբ սահմանված արդյունքային ցուցանիշների ամբողջական կատարումը,

- ✓ իրականացնել լրացուցիչ աշխատանքներ մեդիա ոլորտին առնչվող միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ,

- ✓ շարունակել գենդերային քաղաքականության իրականացման շրջանակներում միջգերատեսչական համագործակցության և համակարգման ամրապնդումը,

- ✓ ապահովել իրականացվող միջոցառումների վերաբերյալ տվյալների համակարգված հավաքագրում և վերլուծություն:

Վերոնշյալ քայլերի իրականացումը կնպաստի Ռազմավարության իրականացման արդյունավետության բարձրացմանը և նախանշված արդյունքային ցուցանիշների ամբողջական ապահովմանը: